№ 210 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 210

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում պրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենի լեզուով

Յայտարարութիւնների համար վճարվում ա
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

(ՅՕՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պետք վճարել. I կրեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետք)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բա ռ առաջս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома .. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պոդիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 10-ին
վախճանվեց
ԱԲՐԱՀԱՄ ԲՈՒՆԵԱԹԵԱՆ
ԲՈՒՆԵԱԹԵԱՆՑԸ

Խորին կսկիծով յայտնելով այդ մասին հանդուցեալի ամուսին Սոֆիա Բունեաթեանցը իր զաւակներով, ծանուցանում են ազգականներին և ծանօթներին, որ թաղումը տեղի կունենայ Մոսկվայում երեքշաբթի, սեպտեմբերի 27-ին:
939. 1—1

Մոսկվայում սեպտեմբերի 24-ին վախճանվեց
ԱԲՐԱՀԱՄ ԲՈՒՆԵԱԹԵԱՆ
ԲՈՒՆԵԱԹԵԱՆՑԸ,

որի մասին յայտնում է ազգականներին և ծանօթներին հանդուցեալի հարս (եղբօր կինը) Շուշանիկ Աղաբեան Բունեաթեանցը իր զաւակներով: Թաղման օրը, որ կայանալու է Մոսկվայում այսօր, երեքշաբթի, սեպտեմբերի 27-ին, Թիֆլիսի Վանքի աւագեկեղեցում մատուցվելու է պատարագ, որի սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին, և կատարվելու է հոգեհանգիստ, որի սկիզբն է ժամը 12-ին:

Շողակաթ Բունեաթեան, Պարծառ Գասպարեան և Աղաբիա Մկրտչեան Շիկանեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինը իր հարազատ անմոռանալի եղբօր և վերջինները իրանց մօրեղբօր՝

ԱԲՐԱՀԱՄ ԲՈՒՆԵԱԹԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Մոսկվայում սեպտեմբերի 24-ին: Թաղումը լինելու է Մոսկվայում այսօր, երեքշաբթի, սեպտեմբերի 27-ին, իսկ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ կատարվելու է այսօր ցեր. ժամը 12-ին, Թիֆլիսի Վանքի մայրեկեղեցում:
941 1—1

ԱՅԽԱՐՀԻՍ ՎՐԱ ՈՉԻՆՉ ՉԸ ԿԱՅ ԱՆԿԱՐԵԼԻ
ՈՐԸ ԵՒ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԾԽԱԽՈՏ

20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.
ՍԱԼԻՏԸ
20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.

Առաջինն է ըստ յատկութեան, առողջապահութեան տեսակէտից, մնում են միշտ թարմ:

ԸՆԿ. Ա. Ե. ԲՕՂԴԱՆՕՎ եւ ԸՆԿ.

Ներկայացուցիչ Ստեփան Նիկիտիչ Կարապետեանց

10—6 765. Թիֆլիս, Բէհբութեան փող., 37.
(օգ. 27,28, ս. 15,25,27,29, հ. 2,4,6) առ.

ФАБРИКИ АЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.
662. 100—43

ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
առ.

ПАПИРОСЫ
ЭКСТРА 15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
(հ. կ.)

ԲԺԻՇԿ
ՄԻՐՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և կաւուի հիւանդութիւնների.
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ
վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ ցեր. ժ. 1—4-ը և երեկ. ժ. 7—9-ը: Միխայլովսկի պր. № 38. Տէլէֆօն № 663.
(հ.հ.կ.) առ. 923. 6—3

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1. ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22. Ելիցավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն:
(հ. հ. կ.) առ. 243. 100—73

ԹԻՖԼԻՍ

Գր. ՄԱԿԱՐԵԱՆ

Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանձակայա փողոց, տան Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.

Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—14

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է տոմի և բերանի հիւանդութիւն ունեցողներին: Պլոմբ, արհեստական առամներ իւրաքանչիւրը 1 ռուբլի, և այլն:
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ:
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուքը պիէռլիպայից:
(հ.հ.կ.) առ. 876. 50—8

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԱՒՈՐՈՒՄՆԵՐ

Թիւրք-իտալական պատերազմը, որ տենդային հետաքրքրութիւն չէ շարժում մեր երկրում, յատուկ ուշադրութեան և առանձին մտազբաղութեան առարկայ է Եւրոպայի քաղաքական աշխարհում:

Միջերկրականի շուրջ քաղաքական դիտումներ ունեցող պետութիւնները լարել են իրանց դիւանագիտական հմտութիւնը չը կորցնելու իրանց շահերը և քաղելու այն օգուտները, որոնք կարող են ստացվել ճարպիկ քաղաքականութեամբ իրերի ներկայ դասաւորութեան պայմաններում:

Եւ անա մենք տեսնում ենք, որ զանազան ձեւերով առաջ են մղվում քաղաքական մամուլի մէջ եւրոպական պետութիւնների ազդեցութեան շրջանների որոշման խնդիրները Թիւրքիայի վերաբերութեամբ, վիճելի են հրատարակվում մի քանի կղզիների քաղաքական կախում ունենալու հարցերը, վերաքննելի են համարվում նեղուցների վերաբերեալ արգելքները և արտօնութիւնները, մի խօսքով հրապարակ են հանվում այն բոլոր կրնճռոտ հանգոյցները, որոնք սպառնական են դարձրել Մերձաւոր Արևելքի քաղաքական հարցի գործնական լուծման խնդիրը:

Միջերկրական ծովի և Մերձաւոր Արևելքի քաղաքական դիրքերը պարունակում են իրանց մէջ չափազանց բարդ յարաբերութիւնների խնդիրներ:

Նախկին հանգոյցների վրա աւելացել են և նորագոյնները: Աֆրիկայի բաժանման հարցը դեռ չէ լուծվել և վերջացել: Եթովպիայի, Տրիպոլիսի, Մարոկկոյի, Կոնգոյի և Միջին Աֆրիկայի երկիրների քաղաքական իրաւասութեան սահմանները նորանոր վէճեր են յարուցանում: Եւ Միջերկրական ծովի ափերին վերաբերեալ խնդիրները այժմ կապվում են աւելի խոր շրջաններում գտնվող աֆրիկական հողերի քաղաքական վիճակի հետ:

Եթէ միւս կողմից ուշադրութեան առնենք, որ Պարսկաստանի և Արաբիայի սահմաններում գտնվող հողերը վաղուց ուրոյն քաղաքական ազդեցութիւնների առարկաներ են դարձել, և որ ներկայումս այնտեղ շարունակվում են յուզմունքներ և վտանգաւոր հրատացումներ, պարզ կը լինի, որ Մերձաւոր Արևելքին վերաբերեալ խնդիրները կարող են միւս կնճռոտ խնդիրների հետ միասին յատուկ բանակցութիւնների առարկաներ դառնալ և անհնկալ լուծում ստանալ:

Թիւրք-իտալական պատերազմը առիթ է դարձել, որ Միջերկրականի և Մերձաւոր Արևելքի բոլոր հին և նոր խնդիրները հանդէս գան իրանց ահռելի և սպառնական կերպարանքով: Եւ նոյնիսկ եթէ այդ պատերազմը չընդարձակի և նոր ճիւղաւորութիւններ չը ստանայ անգամ, դարձեալ նշանակալից և յիշատակելի կը լինի այն, ինչ որ կը պարզվի դիւանագիտական ասպարէզում:

Ներկայ բռնէի անպատրաստ լինելը վերացնելու քաղաքական կնճիռները միայն կը յետաձգի Մերձաւոր Արևելքի հարցի լուծելը և աւելորդ ժամանակ կը տայ, որ ազդող, գործող և մղող զօրութիւնները պատրաստվեն ճակատագրական մաքառման համար:

Մերձաւոր Արևելքի և Միջերկրականի ծովափների աշխարհագրութեան փոփոխութեան սպառնալիքը մնդում է տենչեր եւրոպական պետութիւնների մէջ վերակազմելու աշխարհագրական քարտէզները իրանց նպատակների և հեռանկարների համապատասխան:

Ս. Քալանթար

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 24 սեպտեմբերի

Սեպտեմբերի 24-ին յանուն կառավարիչ սենատի տրվեց հետեւեալ հրամանը.

Պաշտօնական ազդարարութիւն ստանալով Իտալիայի և Թիւրքիայի միջև ծագած պատերազմի մասին և որոշելով խիստ ու անկողմնապահ չեզոքութիւն պահպանել երկու կուռող կողմերի վերաբերութեամբ, Մենք բարւոք տեսանք կարգադրել.

I. Բոլոր պաշտօնական և մասնաւոր անձանց պատուիրագրվում է անշեղ կատարելու — օրինական պատասխանատուութեան երկիւղով—1907 թ. հոկտ. 5/18-ի՝ Հաագայի կօնֆերէնցիայի որոշումները, վերաբերեալ չեզոք պետութիւնների և անձերի իրաւունքներին ու պարտաւորութիւններին ցամաքային պատերազմի դէպքում և վերաբերեալ դարձեալ չեզոք պետութիւնների իրաւունքներին ու պարտաւորութիւններին ծովային պատերազմի դէպքում (1910 թ. քր. օրէնսգիրք 1 բաժ. յօդ. 828):

II. Ի զարգացումն յիշեալ պայմանագրերի որոշումների՝ սահմանվում է. 1) կուռող կողմերի պատերազմական նաւերին թոյլ է տրվում կանգ առնել ռուսական նաւահանգիստներում և նաւակայաններում կամ տէրիտորիալ ջրերում եօթ օր ու գիշերից ոչ աւել. 2) կուռող կողմերից մինի պատերազմական այն նաւերի թիւը, որոնք կարող են միաժամանակ գտնվել ռուսական որևէ նաւահանգստում, որոշում է այդ նաւահանգստի կառավարիչը համաձայն տեղական պայմանների, թէև այդ թիւը վեցից անցնելու չէ. 3) թոյլատրվում է ռուսական նաւահանգիստները պատերազմական աւար մացնել ինչպէս հսկողութեամբ, այնպէս և առանց հսկողութեան, երբ նրանք բերված են այնտեղ պրիզային դատարանի վճռին սպասելու նպատակով: Իսկ այդ աւարի վրա արգելք է դնելու նաւահանգստի կառավարիչը, որը և իրաւունք ունի աւարը ուղարկել ռուսական ուրիշ մի նաւահանգիստ:

Կառավարիչ սենատը չի յապաղի հարկաւորը տնօրինելու ի կատարումն այս կարգադրութեան:

Իսկական վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրված է՝
«ՆԻԿՕԼԱՅ»

Լիվադիա, 23 սեպտ. 1911 թ.

Ճշդից՝ արտաքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ Ներաթով:

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 սեպտեմբերի

Կ. Պօլիս.—Բ. Դուռը պաշտօնապէս յայտարարում է. «Սեպտ. 20-ին իտալացիները սկսեցին ռմբակոծել Տրիպոլիսը 7 ժամ շարունակ: Ամրոցները պատասխանեցին և լուրջ վնասներ պատճառեցին իտալական նաւերին: Երեկոյեան ռմբակոծութիւնը դադարեց: Բերդապահ զօրքի հրամանատարը սպասում էր, որ ռմբակոծութիւնը կը վերսկսվի առաւօտը»:

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Իմամ Եահիան զինադադար կապելով Թիւրքերի հետ, յայտարարեց Եմէնում սրբազան պատերազմ իտալացիների դէմ: Իշխանութիւնները գրաւեցին նաւահանգստում աշխատող իտալական երկու շոգենաւեր:

Արտասահմանեան թղթակիցների ժողովի կողմից ընտրված պատգամաւորութիւնը բողոքեց պօստ-հեռագրական մինիստրութեանը, որ հեռագիրները հարկաւոր ժամանակից ուշ են ուղարկվում, և խնդրեց աւելացնել ծառայողների թիւը, յայտնելով թէ՝ բոլոր թղթակիցները իրանց հեռագիրները կուղարկեն Բոլգարիայով, եթէ երեք օրվայ մէջ հեռագրական հաղորդակցութիւնը չը կանոնաւորվի: Հեռագրապետը խոստացաւ պահանջը կատարել:

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Տրիպոլիսի ռմբակոծութեան ժամանակ սպանվել ու վիրաւորվել են շատ մանաւոր մարդիկ:

«Թանինը» պահանջում է պատերազմը շարունակել, հաւատացնելով թէ՝ մեծ պետութիւնները կերաշխաւորեն հանգստութեան համար, և խորհուրդ է տալիս արտաքսել բոլոր իտալացիներին Թիւրքիայից, որպէսզի նրանք Իտալիայում միացնեն իրանց ձայները պատերազմից դժգոհների ձայներին.

Հռոմ. — «Ջիորնալէ-դ'Իտալիան»-ը Տրիպոլիսի գրաւման առիթով ասում է. «Համարեա 13 դար յետոյ Տրիպոլիսը տեսնում է հռոմէական էմբլէման, որ աւետում է բարբարոսութեան շրջանի վախճանը: Տրիպոլիսի արաբները նախանձով են նայում Եգիպտոսի և Թունիսի առաջխաղացմանը: Իտալիան չը պէտք է ի դերև հանէ նրանց սպասելիքները».

Պետերբուրգ.—Համաձայն իտալական կառավարութեան հաղորդագրութեան, կօնտրաբանդ են համարվելու՝ թնդանօթները, հրացանները, կարաբինները, ատրճանակները, փամփուշտները, թրերը և ամեն տեսակ մնացած զէնքերը, պատերազմական իրերը և ամեն տեսակի ռազմամթերք:

Օսմանեան կառավարութիւնը արգելել է Դարդանէլն անցնող առևտրական նաւերին անցնել գիշերվայ ժամը 12-ից ուշ: Բոլոր ծովափեայ ճրագները հանգցվելու են:

Պիզա.—Թագաւորական զոյգը, գահառնգը և պրինցուհիները ընդունվեցին ի պատիւ իտալական Տրիպոլիսի, նաւատորմի, զօրքի և թագաւորական զոյգի ուղղված բացագանչութիւններով.

Թուրին.—Թագաւորական թատրոնում կայացաւ ճաշ ի պատիւ Ջիոլէտտիի 1,000 մարդու ներկայութեամբ: Ներկայ էին մինիստրները, 600 սենատորներ, պատգամաւորներ և նշանաւոր գործիչներ:

Խնճոյքի ժամանակ Ջիոլէտտին արտասանեց մի ճառ, որի մէջ ի միջի այլոց ասաց. «Ներկայ մինիստրութիւնը, ներկայանալով պարլամենտում, ցանկութիւն յայտնեց հետևելու դաշնակցութեան հաւատարիմ մնալու քաղաքականութեանը և բոլոր մեծ պետութիւնների հետ սրտանց բարեկամ մնալու քաղաքականութեանը, աշխատելով խաղաղութիւն պահպանել, միևնոյն ժամանակ ազգային արժանապատուութիւնն ու հայրենի շահերը եռանդով պաշտպանելով: Մենք խաղաղութիւնը Իտալիայի համար գերագոյն բարիք ենք համարում, սակայն չենք կարող հանգիստ կեանքի սիրոյն զոհել երկրի կենսական շահերն ու ազգային արժանապատուութիւնը: Պատմութիւնը մեզ ասում է, որ այն կառավարութիւնները, որոնք կարող են ներկայացուցիչներ համարվել բոլոր սոցիալական դասակարգերի, հանդիսանում են իրանց երկրի մեծ շահերի արի կրողներ և մտածում են ոչ միայն անմիջական շահի մասին, այլև հեռաւոր ապագայի մասին: Դէպքեր կան, որոնք ինքնին պատմական ճակատագրական են, որից ժողովուրդը չէ կարող անջատվել: Կառավարութիւնը այդ տեսակ բոլոր դէպքերին պարտաւոր է պատասխանատուութիւնը իր վրա վերցնել, որովհետև յապաղումը կը լինի նշան քաղաքական անկման, որ ընդունակ է այնպիսի արգասիքներ տալ, որոնց համար ժողովուրդը կը ցաւէ երկար տարիներ, երբեմն դարեր: Մինիստրութիւնը պատասխանատուութիւնը յանձն առաւ հանդիսա, վտանգի յապաղումը այնպիսի մի ժամանակ, երբ Թիւրքական թշնամութիւնը մեզ արգելում էր տնտեսական գործունէութիւն սկսել Տրիպոլիսում, կը սպառնար երկրի պատուին, նրա քաղաքական ու տնտեսական դրութեան: Մենք հանգստութեամբ կը սպասենք պարլամենտի և երկրի դատավճռին և ողջոյն կուղարկենք զօրքին և նաւատորմին, դէպի որոնց իտալական ժողովուրդը լիակատար վստահութիւն է տածում».

Զիօլէտտիի ճառից յետոյ ներկայ եղողները օվացիաներ սարքեցին նրան։

—

Կ. Պոլիս.—Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ մինիստրների խորհուրդը որոշեց Թիւրքիայից արտաքսել բոլոր իտալացիներին։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է. «Իտալական նաւերը ռմբակոծեցին Մէդուան։ Ամրոցները պատասխանեցին։ Մի իտալական նաւակ խորտակվեց։ Մի նաւ ևս փչացաւ բերդերից արձակված կրակից։ Քաղաքը ռմբակոծութիւնից չը վնասվեց։ Իտալացիները հեռացան»։

Վիէննայի թիւրքաց դեսպան Բէշիդ-բէյը հրաժարվեց արտաքին գործերի մինիստրի պօրտֆէյլից։

Թիւրքիան հաշտութիւն է խնդրում և համաձայնվում է Իտալիայի բոլոր պայմաններին։ Իտալացիները այլ ևս զօրք չեն իջեցնելու։ Մինիստրների խորհուրդը այս վճիռը ընդունեց կէս գիշերին, ստանալով կարևոր տեղեկութիւն Աւստրիայի կողմից։ Օսմանեան գործակալութեան ասելով, Բ. Դուռը վճռել է նորից նօտա ուղարկել մեծ պետութիւններին, խնդրելով միջամտել և արիւնհեղութիւնը դադարեցնելուն նպաստել։

Իտալական նաւերը երէկ մտել են Ադրիատիկ ծովի բոլոր թիւրքական նաւահանգիստները և ռմբակոծել են Մէդուան։

—

Հռոմ. — Շարունակ ռազմանաւերը լցվում են զօրքերով։ Լուրերի համաձայն՝ ուղարկվելու են 80 առևտրական նաւ։ Զօրքերի տեղափոխութեան պատճառով գնացքների կանոնաւոր երթևեկութիւնը խանգարված է։

—

Աթէնք.—Կորինթի ջրանցքի ընկերութիւնը մինիստրների համաձայնութեամբ որոշեց ջրանցքը փակել երկու կուռող կողմերի նաւերի համար պատերազմի ամբողջ ընթացքում։

Սամօսի պալատի պատգամաւորները բողոքեցին 500 թիւրք զինուորների ափ իջեցման դէմ։ Սամօսի իշխանը բողոք ուղարկեց Բ. Դրան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
25 սեպտեմբերի

Պետերբուրգ. — Բարձրագոյն կարգադրութեամբ պետական քարտուղար Մակարովը նշանակվեց ներքին գործերի մինիստր։

—

Լօնդոն.—Վերջերս հաղորդված այն տեղեկութեան առիթով, թէ մտադրութիւն կայ երկու հնդկական հեծելազօր ուղարկել Հարաւային Պարսկաստան, «Թայմսը» հաղորդում է, որ Շիրազից ստացված վերջին տեղեկութիւնների համաձայն՝ այնտեղ դրութեան փոքր ինչ բարելաւումն է նկատվում. այդ պատճառով հնարաւոր է, որ բրիտանական կառավարութիւնը այլևս հարկ չը համարէ զօրագունդ ուղարկել Հարաւային Պարսկաստան։

—

Պետերբուրգ.— Կայսրը բարեհաճեց թոյլատրել համառուսական հանգանակութիւն բանալ Կիէվում Ստոլիպինին արձան կանգնեցնելու համար, պայմանով՝ որ հանգանակութեան վրա հսկէ յատուկ մանաժողով Կիէվի գէներալ-նահանգապետի նախագահութեամբ։

—

Պարիզ.—Մինիստրների խորհրդի նիստում դը-Սէլվը յայտնեց, թէ բանակցութիւնները Գերմանիայի հետ ընթանում են միանգամայն նպաստաւոր պայմաններում։

—

Կահիրէ.—«Սէրվիցի-Մարիտիմ-Իտալիանի» գլխաւոր գործակալութիւնը տեղեկացրեց Եգիպտոսի պօստային իշխանութեան, որ պօստային հաղորդակցութիւնը բոլորովին դադարել է Իտալիայի և Եգիպտոսի միջև։ Իտալական կառավարութիւնը յանձնաւոր ուղարկեց Պօրտ-Սայիդ՝ թիւրքական նաւերի վրա հսկելու համար։

—

Կանէա.—Ցունական զօրքերին զէնքի կոչելու լուրերը, նոր յոյսեր առաջ բերելով, այստեղ ստեղծեցին զրգռված տրամադրութիւն, որի հողի վրա տեղի ունեցան լուրջ տարաձայնութիւններ օպոզիցիայի և կառավարական-ների միջև։

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ թիւրքերը Սամօսում իջեցրել են 500 զինուորից բաղկացած մի զօրամաս։ Այդպիսով խախտվում է Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի 1832 թիւին սահմանած որոշումը։

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հերքում է «Ենի-Գազետայի» այն տեղեկութիւնը, թէ իբր սահմանի վրա հրացանաձգութիւն է տեղի ունեցել յոյն և թիւրք զինուորների միջև։

—

Հռոմ (?).—Ֆրանսիական արմատական կուսակցութեան կօնգրէսը վստահութիւն յայտնեց կառավարութեան։

—

Մադրիդ. — Պաշտօնական շրջանները յայտնում են, որ Մէլիլիան գրաւած զօրքերը սկսել են նախնական ռազմի գործողութիւնները։

—

Բերլին.—«Ֆոսիշէ-Ցայտ.-ը» հաղորդում է, որ Մէլիլիայում սպանցիները պատերազմական նաւերի մասնակցութեամբ ընդարձակ պատերազմական գործողութիւններ են սկսել Թշնամի ցեղերի դէմ։

—

Բուդապեշտ.—Պաշտօնական օրգանը հաղորդում է, որ բօսնիական երկաթուղագծերի վրա հացահատիկներով լի վագոնների երթևեկութիւնը դադարեցված է սեպտ. 14-ին զօրքերի սաստիկ տեղափոխութեան պատճառով։ Լրագիրները այդ տեղեկութիւնից հետևեցնում են, թէ իբր Բալկաններում պատերազմի ուրուականն է կանգնել։

—

Ցուլօն.— «Ժիլ-Ֆէրրի» յածանաւը ծով մտաւ, «Դամբէտտան» կը մեկնէ մի քանի օր յետոյ։ Երկուսն էլ միանալու են «Ռընանի» հետ՝ պատերազմի ժամանակ ֆրանսիական շահերը միացեալ ոյժերով պաշտպանելու համար։

—

Հաւանա.—Հեղեղից փնասվեցին հարիւրաւոր բնակատեղիներ։ Վիսկօնսին նահանգում խեղդվեցին 40 մարդ։ Վնասները մի քանի միլիոն դոլլարի են հասնում։

—

Բելգրադ. — Լաւատեղեակ շրջանները հաղորդում են, որ Կ. Պոլսում պաշտօնավարող սերբական դեսպանը, Բ. Դրանը իր կառավարութեան նօտան յանձնելու հետ միաժամանակ, բերանացի յայտարարութիւն է արել՝ թէ Սերբիան իրան է վերապահում գործողութեան ազատութիւն, այն դէպքում, եթէ Բալկանեան թերակղզում առաջ գան բարդութիւններ, որոնք սպառնան թիւրքական նահանգներում բնակվող սերբերի անձնական ու ստացուածքային ապահովութեանը։

ԴԵՊՔԵՐԸ ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 սեպտեմբերի

Լիսաբոն.—Երէկ առաւօտ 700 միապետականներ Կամխօսի հրամանատարութեամբ ներս խուժեցին Բրագանցա նահանգը և գրաւեցին մի քանի գիւղաքաղաքներ։ Բօեալիստներին միացան նաև 2000 մարդ։ Կառավարութիւնը զօրքեր ուղարկեց Բրագանցա։ Օպօրտոյից ուղարկվում է ռազմանաւ դէպի հիւսիսային սահմանը։ Կառավարութիւնը յայտնում է, թէ բաւականին ոյժ ունի կարգ ու կանոնը սահմանում վերականգնելու համար։

Միապետականների մի զօրաբանակ փորձեց գրաւել Բրագանցայի մօտերը Մասէդօ-դօս-Կավալէյրօսին, սակայն յետ մղվեց 30 մարդու կորուստով։

Շավէզում, Բրագանցայում և Կաստէլլօ-Բրանկօյում կարգ ու կանոնը վերականգնվեց։ Կալանաւորված են հանրապետութեան դէմ պրօպագանդա մղողները։

—

Լօնդոն.—«Դէյլի Խրօնիկլը» հաղորդում է, որ Մանուէլ թագաւորը գտնվում է Ռիչմոնդում։

—

Օպօրտօ.—Միապետականները կենտրօնացան Վինխաէսում։ Հանրապետականների զօրագունդը գրաւեց Բրագանցան։

—

Կեօշն.—«Կեօշն. Ցայտ.»-ի թղթակիցը հիւսիսային Պօրտուգալիայում գրութիւնը նկարագրում է չափազանց լուրջ։

—

Վիէննա. — Պօրտուգալական գահի պրետենդէնտ Բրագանցային, դուքս Միգուէլ որ ապրում է Վիէննայի մօտերը, հաղորդեց «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէին»ը, որ Կօնսէյրօն կուում է ոչ այնքան Էկս-թագաւորի համար, որքան յանուն միապետական սկզբունքի։ Դուքսը թոյլ տուեց իր որդիներին կռիւ մղել միմիայն ուրիշների անուններով։

—

Լիսաբոն.—Բրագանցայից հաղորդում են սեպտեմբերի 24-ից, որ բօեալիստները չարդվեցին և նահանջեցին դէպի սպանական սահմանները։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ԿՕՄԻՏԷՏԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Berliner Tageblatt» լրագիրը ստացել է տեղեկութիւններ «Միութիւն և Առաջադիմութիւն» կօմիտէի գործունէութեան մասին այս օրերում։ Երբ ստացվեց մանրամասն հաղորդագրութիւն մինիստրների նիստի մասին սուլթանի նախագահութեամբ, ուր որոշվեց յանձնել Տրիպոլիսը առանց կռուի, Սալոնիկի կօմիտէի անդամները անյապաղ խորհրդակցութեան հրաւիրվեցին, սաստիկ յուզված և զայրացած։ Գիներալ-նահանգապետը եկաւ խորհրդակցութեան և հաղորդեց կօմիտէին այն բոլոր պաշտօնական տեղեկութիւնները, որ նա ստացել էր մեծ վէզիրից։ Մասնակցողների սարսափելի յուզման ժամանակ միաձայն վճռվեց հրատարակել կոչ՝ փակելու իտալական բոլոր առևտրական և կրեդիտային հիմնարկութիւնները և արտաքսել բոլոր իտալահպատակներին Թիւրքիայից։ Առաջինը ստորագրեցին կոչը Թալաաթ-բէյը և Ջաւիդ-բէյը։ Այդ ակտի հետևանքը անյապաղ արտայայտվեց Սալոնիկում։ Նոյն օրն և եթ մակեդոնական ժանդարմերիայի մէջ ծառայող իտալական օֆիցէրները, ուսուցիչները, պօստի ծառայողները և մինչև անգամ հասարակ ձկնորսները ծախեցին ՀՀին գնով իրանց գոյքը և ճանապարհ ընկան Սալոնիկ։ Կօմիտէի անդամները չափազանց զայրոյթ և թշնամութիւն են արտայայտում դէպի եւրոպական պետութիւնները, որոնք անուշադրութեան մատնեցին Թիւրքիան վտանգաւոր րոպէում։ Շատերն ասում են, որ Եւրոպան որոշել է բաժան-բաժան անել Թիւրքիան, ոչնչացնել նրան, մաս-մաս անելով նրանց, և այդ պատճառով ամեն միջոցի պէտք է դիմել։ «Կամ յաղթութիւն, կամ ինքնասպանութիւն»—որպէս ասաց կօմիտէի անդամներից մէկը։ («Բ. Բ.»)

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԸՆ

Կ. Պոլիս, 5/18 սեպտեմբեր

Պետական կեանքի մէջ անցեալ շաբթուն մէջ ամենէն աւելի միտքերը զբաղեցնող խնդիրը դահլիճին մէջ տիրող անհամաձայնութիւնն էր բիւջէի կազմութեան համար։ Նայիլ բէյ, ելեմուտքի մինիստրը, պատերազմական մինիստրութեան ծախքերին կուզէ որ զիջանի մէկ միլիոն օսմ. ոսկի (մեր ձաւորապէս 8 միլիոն ռուբլի)։ Մահմուդ Շեֆքէթ փաշան, բուռն կերպով կընդդիմանայ այս զեղջը կատարելու և միայն կը բարեհաճի... իբր շնորհ 100,000 ոսկի զեղջ մը ընել... իր պաշտօնակիցներուն խաթրը չկոտրելու համար։

Երկու մինիստրներն ալ կատակերգական յամառութեամբ մը կը սպառնան հրաժարիլ, եթէ իրենց խօսքը չընայ։

Վերջին խօսքը ապահովաբար Մահմուդ Շեֆքէթ փաշային պիտի մնայ, զի առանց անոր Հակիք փաշային դահլիճը չի կրնար ապրիլ։

Հոգվարքը դահլիճը չի կրնար դիմանալ առանց Մահմուդ Շեֆքէթ փաշայի պրէստիժին, որ իր կողմն ունի բանակին համակրութիւնը։ Առանց այդ համակրութեան ոչ միայն դահլիճը զոյութիւն չունի, այլ նոյն իսկ սահմանադրութիւնը կընայ յօդս ցնդիլ։

Այս պայմաններուն մէջ բնական է թէ տրամաբանութեան տեղ զգացումները գործեն և բոլոր երկիրը նախընտրէ պարտքի տակ ընկնիլ, համակերպելով պատերազմական մինիստրին, քան թէ ճշմարիտ և իրական հեռատես քաղաքագէտ Նայիլ բէյի ցոյց տուած վտանգը տեսնելով՝ ընդդիմի և ինքզինքն ազատէ վտանգէ։

Այս ձևով իրապէս Թիւրքիա կը դիմէ անդունդ, դէպի խորխորատ, դէպի կորուստ. սիկա ոչ ոքին փոյթն է։

Ջաւիդ բէյ գծեց սահմանադրական կառավարութեան համար այս սխալ ճամբան, իբր թէ օտար հարստութեան Թիւրքիա մուտքը արդիւնաբերական աշխատանք ներկայացնելով պատգամաւորներուն, մինչ իրականութեան մէջ այդպէս չէր։ Օտար երկրէ քաշուած դրամը նաև կը յատկանար փճանալու և ջնջուելու՝ ծախսուելով սպառողականութեանց։

Երկաթուղիներ, շոգենաւային ընկերութիւններ կազմակերպելու, ճամբաներ յարդարելու, գետերը կանոնաւորելու, ճահիճները ցամաքեցնելու, լիճերը շահագործելու համար որչափ որ երկիրը խոշոր փոխառութիւններ ընէ, քանի որ անոնք արդիւնաբեր ըլլալու կոչուած են և ժողովուրդին բարեկեցութիւնը կը պարարտեն, ապահովելով առատ տուրք և մեծ հասոյթ, բնական է թէ կործանարար չեն և վախնալու ոչինչ կայ։ Սակայն Թիւրքիոյ բոլոր փոխառութիւնները բանակին պէտքերուն գործածուեցան և փճացան Արաբիոն կիզանուտ անապատներուն և պլանական անմատչելի սարերուն վրայ։ Փոխանակ այս ժողովուրդին ուսում տալու, կրթական բիւջէն տարուէ տարի կը չզեղչեն, զինուորականին բաժինը կարելի եղածին չափ մեծցնելու համար, և տակաւին կըսեն, թէ Թիւրքիան չառաջադիմեր։

Նայիլ-բէյ՝ որ Ջաւիդ-բէյի շահախնդրութիւնը չունի և ապահովաբար խոշոր միջնորդէքի մը համար խոշոր փոխառութիւն մը կնքելու հետամուտ չէ, կը վախնայ ահաւոր պատասխանատուութենէ մը, և հաւանական է, որ իր ակամայ և գրեթէ բռնի ստանձնուած պաշտօնը թողու, կատարեալ խղճի անդորրութեամբ։

Բայց աւելի հաւանական է, որ դահլիճը՝ խաղաղութեան նաւահանգիստը հասնելու պէս հասնի խորհրդարանին բացման օրերու։ Խորհրդարանին մէջ անշուշտ պիտի կատարուի զօտեմարտութիւնը Թիւրքիոյ վարիչներու երկու դասակարգերուն, պարտքէ չվախցողներուն և պարտքէ վախցողներուն մէջև, որոնցմէ մէկուն անշուշտ իրաւունք պիտի տայ խորհրդարանը։ կամ աւելի հաւանօրէն, իր առաջարկները և կայմերը կորուսած նաւուն պէս, որ հազիւ մազապուր կլլնայ նաւահանգիստ, Հակիք փաշա իր հրաժարականը պիտի տայ, և իր օձիկը պիտի ազատէ։ Շառայ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 8 սեպտեմբերի

Այսօր, ամսիս 28-ի գիշերը, Վանի շրջանում սաստիկ ցուրտ արեց, ու խաղողի որթերը, բանջարանոցները ու սեխաստանները մեծ մասամբ ցրտահար եղան և փչացան. հունձքը գրեթէ վերջացել է. բայց արդիւնքը անբաւարար է. իսկ մի քանի գաւառներումն էլ խպառ անհնարն, որովհետև մեծ մասամբ փչացել էին կարկուտից, մի մասն էլ երաշտութիւնից։ Տեղ-տեղ թէև առատ են եղել, բայց դրանք բացառութիւն են կազմում, ուստի արմտիքների գինը թանգացել է և գուցէ աւելի էլ թանգանայ առաջիկայում։ Աւելի շատ թանգ են մսի, իւղի, ածուխի և ուրիշ կենսական նիւթերի գները և հաւանականաբար աւելի էլ թանգանան առաջիկայ ձմրան միջում։

Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՒՐՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱԿՏԸ

Երէկ, սեպտեմբերի 26-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի կանանց բարձրագոյն կուրսերի երկրորդ տարեկան ակտը։

Մաղթանքից յետոյ կուրսերի վերատեսուչ պրոֆ. Բլագովիդով խօսեց մի ճառ, որի մէջ ծանօթացրեց հանդիսականներին կանանց դասընթացքների կարիքների հետ և յորդորից հասարակութեանը աջակից լինել բարւոքելու կուրսերի վիճակը մինչև կատարելութիւն։ Միևնոյն ժամանակ ցանկութիւն յայտնեց, որ շուտով իրականանայ և կովկասեան համալսարանը, որի գիտական ոյժերը կարող են մեծապէս նպաստաւոր լինել և կանանց կուրսերի բարգաւաճմանը։ Վերջում Բլագովիդովը յայտնեց, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թոյլատրել է կանանց կուրսերի երեքամեայ շրջանը վերածել չորսամեայի։

Այնուհետև դասախօս Ֆօմին կարդաց մի զեկուցում բոյսերի աճման և զարգացման մասին զանազան լեռնաշրջաններում։ Զեկուցումը ըստ էութեան հետաքրքրական էր, բայց ոչ մի տպաւորութիւն չը գործեց, որովհետև չէր լսվում զեկուցողի ձայնը։

Ակտին ժողովվել էր մեծ հասարակութիւն։

Ներկայ էին քաղաքային վարչութեան, գիտական ընկերութիւնների և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներ, բազմաթիւ անձեր հասարակութիւնից, ուսուցիչներ, ուսանողուհիներ։

Հանդէսը սկսվեց ժամը 1½-ին և վերջացաւ 2¾-ին։ Ն.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

Թիֆլիսի հասարակական ակումբի վերջին երեկոյթը նուիրված էր սպանական գրող Իբանեսի ստեղծագործութիւններին։

Դասախօս Մնարսկի ընդարձակ սպանական նշանաւոր գրողին և կարդաց նրա գրուածքներից նմուշներ։

Իբանէսը ներկայումս 44 տարեկան է, անդամ է ազգային ժողովում, դեռ ևս առոյգ է և իր ստեղծագործութեան հասուն վիճակում։ Նա հետևում է վիպասանութեան բէալական ուղղութեան։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցան վիճաբանութիւններ բէալական և սիմվոլական ուղղութիւնների մասին։

Հանդիսականները ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեցին դասախօսին։ Ա.

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կովկասեան Հայոց Հրատարակչ. Ընկերութեան կիրակի օրվայ ընդհանուր ժողովը դահլիճ էր գրաւել հազիւ 25 անդամներ։

Տեսնելով այն դակուութիւնը և անտարբերութիւնը, որով համակված՝ մարդիկ մտնում էին ժողով, ակամայ յիշում էիր ընդամենը մէկ ու կէս տարի առաջ գումարված առաջին ընդհանուր ժողովը, երբ դահլիճը գլխէ գլուխ լիքն էր անդամագրվելու եկած անձերով...

Այսօրվայ ժողովին նախագահում էր Տ. Յովհաննիսեան։ Արձանագրութիւնների ընթերցումից յետոյ սկսվում է վիճաբանութիւն՝ «ւ»-ների, «ու»-ի մասին։ «Դրանցից է կախված Ընկերութեան բաղդը, նրա լինել ու չը լինելը», «պէտք է առժամանակ դադարեցնել Ընկերութեան գործունէութիւնը (?) և ակադեմիկոսներին հարցնել՝ որն է դրանցից լաւը՝ և ապա թէ գործ սկսել»։ Խմբագրական մասնաժողովը հրաժարվել է իր ողկազմով՝ «կաբինէտի» հրաժարականի նման. նա ստացել էր անվստահութեան քուէ, իսկ նոր կաբինէտ էլ կազմել չէ վստահանում ոչ ոք, կաբինէտի մէջ մնալ՝ մնաւանդ. բոլորը հրաժարվում են իրանց քուէատուփը դնելուց. միմիայն Մ. Զմշկեանն է, որ ցաւում է, թէ ինչու իրան չեն ընտրում, այն ինչ նա կարող էր օգտուտ լինել։

Ս. Լիսիցեան, տեսնելով այս դրութիւնը, այն միտքն է յայտնում, որ հազար անգամ լաւ կը լինէր, եթէ վարչութիւնը ինքը հրաւիրէր խմբագրական մասնաժողով և ընտրելու իրաւունքից զրկէր ընդհանուր ժողովին։ Սկսվում են երկար ու ձանձրալի վէճեր, թէ ինչու մարդիկ հրաժարվում են ընտրվելուց, խոյս են տալիս Ընկերութեան մէջ գործելուց, ինչպէս անել յաջորդ ժողովին ընտրութիւններ կայացնելու, մարդիկ բերելու։

Որոշվում է ընտրութիւնները յետաձգել երկու շաբթով, իսկ այժմ ցրվել անները։ Դրանով էլ աւարտվում է Կովկասեան Հայոց Հրատարակչական Ընկերութեան այս ժողովը։

Դալուկ, թոյլ, յուսահատ, բոլորն էլ զգում են, որ այն չէ դուրս գալիս, ինչ որ կարծում էին սկզբում։

Ինչու։ Դրա մասին մենք կը խօսենք։

Անդամ

Ա. Ա. ՄԱԿԱՐՈՎ

Հեռագիրը հաղորդում է, որ Ա. Ա. Մակարովը նշանակված է ներքին գործերի մինիստր։

Ա. Ա. Մակարովը ծագում է վաճառականական ընտանիքից։ Նա ծնվել է Պետերբուրգում 1857 թիւին։ Նա իր սկզբնական, միջին և բարձր կրթութիւնն ստացել է նոյնպէս Պետերբուրգում՝ վերջացնելով Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժանմունքը առաջին աստիճանի դիպլոմով։

Նա իր պետական ծառայութիւնը սկսել է արդարադատութեան մինիստրութեան մէջ, պաշտօնավարելով դատական բաժանմունքում։ Վերջին տարիները նրա ծառայութիւնը սերտ կերպով կապված էր մինիստրների խորհրդի հանգուցեալ նախագահ Ստոլիպինի անուան հետ։ Այդ՝ Սարատովումն էր, ուր Մակարովը նշանակվեց այդ քաղաքի դատաստանական պալատի դատախազի օգնական, իսկ Ստոլիպինը նահանգապետի պաշտօն էր վարում։ Նրանց միջև գոյութիւն ունէր բարեկամական սերտ յարաբերութիւն։ Մակարովը առանձնապէս յայտնի եղաւ Սարատովի նահանգում տեղի ունեցած անկարգութիւնների ժամանակ և Ստոլիպինի հետ միասին իր վրա դարձրեց զեկավար շրջանների ուշադրութիւնը։

Ստոլիպինը 1906 թ. նշանակվեց ներքին գործերի մինիստր։ Նա որոնում էր իր համար աշխատակիցներ։ Նոր մինիստրը իբրև իրան օգնական հրաւիրեց ամենից առաջ Ա. Ա. Մակարովին։ Իսկ երբ Ստոլիպինը նշանակվեց պրեմիէր-մինիստր, Մակարովն ստանձնեց ներքին գործերի մինիստրութեան ոստիկանական մասի զեկավարի կարևոր և պատասխանատու պաշտօնը։ Ներքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնում Մակարովը մնաց երեք տարի, իսկ 1910 թ. նշանակվեց պետական քարտուղար։ Նոր պաշտօնի մէջ էլ՝ Մակարովը չը խզեց իր կապերը ներքին գործերի մինիստրութեան հետ և շուտով, Ստոլիպինի առաջարկութեամբ, գլուխ կանգնեց այն յատուկ յանձնաժողովի, որ նպատակ ունէր վերաքննել ոստիկանութեան վերաբերեալ գործողութիւններն ու օրէնքները և մշակել նոր կանոնադրութիւն՝ ոստիկանութեան բարենորոգման համար։

Ա. Ա. Մակարովն իր այդ աշխատանքը վերջացնելուց յետոյ՝ ներկայացրեց մինիստրների խորհրդին։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԻՒՂԱՏՆ. ԲԱՐՁՐ. ԿՈՒՐՍԵՐԻ ՄԱՍԻՆ

I

Վերջին տարիներս Ռուսաստանը մի այնպիսի զրութեան մէջ է, աշխատաւոր գիւղացու տնտեսականը այնպիսի վատթար դրութեան է հասել, որ նրան այդ վիճակից հանելու համար հարկաւոր է երկար ժամանակ քրտնաջան աշխատանք, հարկաւոր են գիւղատնտեսութեան հետ ծանօթ այնպիսի անհատներ, որոնք ունենալով թէօրական և գործնական պատրաստականութիւն, դուրս բերէին գիւղացիութեանն այդ անելանելի վիճակից։ հակառակ դէպքում, նա պիտի անդունդ ընկնի։

Անցեալ դարի վերջին կէսում, Ռուսաստանում գիւղատնտեսական ստորին և միջնակարգ դպրոցների թիւը հազիւ մի քանի տասնեակների էր հասնում, իսկ բարձրագոյնների թիւը երկուսից դէնը չէ անցել։ Պէտք է նկատել, որ յիշեալ դպրոցներում մինչև 20-րդ դարի առաջին տասնամեակը գլխաւորապէս ուշադրութիւն էին դարձնում թէօրականին։ Բացի այդ՝ վերոյիշեալ բարձրագոյն երկու դպրոցներում ընդունում էին այն անհատներին, որոնք ունէին բաղդի բերմամբ գիմնազիայի վկայական։ Ինչ վերաբերում է բէալական, առևտրական դպրոցները աւարտածներին, նրանք լրացուցիչ քննութիւն պիտի տային. իսկ սեմինարիստները, առանց այլևայլութեան, պիտի գիմնազիայի VIII դասարանի քննութիւն տային։ Բայց այդպէս երկար չէր կարող շարունակվել։ անցաւ 19-րդ դարը, եկաւ 20-րդ դարը իր լուսատու աստղերով, որի առաջին կէսամեակը գիւղատնտեսական ասպարէզում, բացի բէֆօրմայի դար լինելուց, է նաև գործնականի և թէօրիայի միացման դար բոլոր ասպարէզներում։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ հաղարաւոր փորձերը եկան ապացուցեցին, որ մէկը առանց միւսի իրական հետևանքների չէ հասցնում։ Ահա այդ էր պատճառը, որ վերջին տարիներս գիւղատնտեսական դպրոցներում անգամ սկսեց ուղիղ ճանապարհ ընտրել, եղած բոլոր գիւղատնտեսական դպրոցները բարեփոխման ենթարկել, դնելով նրանց գործունէութիւնը այլ կերպ։

Այո, 20-րդ դարին (առաջին տասնամեակ) շատ բան ենք պարտական, մասնաւորապէս

գիւղացի դասակարգը. 1905—6—7 թուերը նոր հովերի, նոր գործունէութեան եղանակի ընդունելութեան թուեր կարելի է համարել. այդ դեռ բաւական չէ, այդ թուականներին Ռուսաստանի զանազան վայրերում բացվեցին գիւղատնտեսական համարեա թէ ամէն տիպի դպրոցներ։ 1906 թուին բացվեցին նաև Պետերբուրգի գիւղատնտ. բարձրագոյն կուրսերը։ Կուրսերի հիմնադիրներն էին, մի շարք պրոֆէսորներ ու պրիվատ-դոցենտներ, որոնց նպատակն է եղել նախ՝ գիւղատնտեսութեան կարօտ 120 միլիոն գիւղացիութիւնը օգնութեան հասնել հետաքրքրական դասախօսութիւններով, որոնք կը ցանկանային այդ գիտութիւնը ստանալ, չունենալով նոյնիսկ այս կամ այն դպրոցներից վկայական, բաւական է որ այդ անձնաւորութիւնները ունենային այնքան պատրաստականութիւն, որպէսզի կարողանային պրոֆէսորների դասախօսութիւնները իւրացնել. և յետոյ, որ գլխաւորն է, հաղարաւոր սեմինարիստներին հնարաւորութիւն տալ ստանալու բարձրագոյն ուսում՝ գոնէ գիւղատնտեսական դպրոցներում. չէ որ նրանց առաջ փակ են բոլոր բարձրագոյն դպրոցները։

Եւ, իսկապէս, յարգելի հիմնադիրները իրանց նպատակին համարեա թէ հասան. բայց մի բանում միայն սխալվեցին. յարգելի հիմնադիրները կարծում էին, թէ 1906 թիւը, իբրև այդպիսին, իր այդ դրութեամբ աւելի կառաջադիմի, մշտական դէպի առաջ կերթայ, և կարիք չի զգացվի կուրսերի ծրագիրը կամ գործունէութիւնը այս կամ այն կերպ փոփոխութեան ենթարկել։ Անցան-գնացին վաղեմի օրերը և թարկել։ Անցան-գնացին վաղեմի օրերը և եկան 1908—9—10 և 11 դժուն թուականները՝ սփռելով իրանց թեները համարեա թէ ամեն մի ասպարէզում. բէակցիան ազդեց նաև մեր կուրսերի վրա. և ահա կուրսերի հիմնադիրները սկսեցին մի քանի փոփոխութիւններ կատարել ծրագրի և կանոնադրութեան մէջ։

Յարգելի հիմնադիրները իրանց սկսած համեստ գումարով (կուրսերի հիմքը եղել է 600 ռուբլի անդամավճար) չեն կարծում, որ յանկարծ կուրսերի բիւջէն կարող է հասնել 100—120 հազարի և 40—50 ուսանողներից 1100—1200 հոգու, ինչպէս և այն, որ փոքրիկ երեք սենեկանոց կուրսերի շինութիւնը կը փոխվի մի մեծ ահագին շինութեան։

Պարզ բան էր, որ այդպէս էլ պիտի լինի, քանի որ իրական կեանքը այդպէս էր թելադրում. շեղվել՝ նշանակում է հակառակը գնալ բնական օրէնքի առաջնացութեան, էվոլիւցիայի։

Ահա թէ ինչու մինչև անցեալ տարի, կուրսերում ընդունում էին բոլոր այն անձանց, որոնց հասակը 17 տարեկանից փոքր չէ և որոնք VI դասարանի իբրև թէ պատրաստականութիւն կամ վկայական ունեն. բայց նորից եմ կրկնում, որ դառն փորձերը եկան ցոյց տուին հակառակը, այն է՝ բաւական չէ յիշատակել կանոնադրութեան մէջ կամ ինստրուկցիաներ հրատարակել, այլ պէտք է կորուկ և այսպէս ասած ըէալ միջոցների դիմել, որովհետև վերջը երևաց, որ ուսանողների մի ստուար մասը չէ կարողանում իւրացնել դասախօսութիւնները, և միայն անցեալ տարի կուրսերի վարչութիւնը յայտարարեց նոր ընդունվողներին, որ ով VI դասարանի վկայական չունի (թէև հէնց այդ ցենզաւոր-վկայական ունեցողներից շատ-շատերը վերոյիշեալների շարքերին են պատկանում), նա ռուսերէնից, ֆիզիկայից, քիմիայից և մատեմատիկայից պէտք է քննութիւն տայ։ Այս անգամ էլ վարչութեան փորձերը անպտուղ անցան, չնորհիւ նրա թուլութեան։ Այդ պատճառով, կուրսերի վարչութիւնը այս տարուց ընդունվող ուսանողներին աւելի կորուկ միջոցներ առաջարկեց, որ VI դասարանի վկայական չունեցողները հոկտեմբերին անպատճառ պիտի տան յիշեալ երեք առարկաներից քննութիւն. և եթէ վկայական չունեցող ունկնդիրները այս կամ այն յարգելի պատճառով չեն կարողանում որոշված ժամանակին քննութիւն տալ, նրանց ժամանակ է տրվում, ամբողջ տարվայ ընթացքում վերոյիշեալ առարկաներից քննութիւն տալու։ տարվայ ընթացքում յիշածս առարկաներից քննութիւն չը տուողները հեռացվում են կուրսերից։

Ուսանող Ս. Վարանդեան
(Վերջը միւս անգամ)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անցառային rէվիզիա

Սև-Քար (Ղաղ. գաւ.), 16 սեպտ.

Ամսիս 14-ին տեղս ժամանեց Դիւիջանի բէվիզօրը, մեր մասի անտառապետ Խասբօլաղ-Բէգօվի հետ, շրջապատված մի խումբ անտառապահներով։ Բէվիզօրը եկել էր քննութեան Օրդինեան անտառապահի մասին։ Օրդինեանին շատ վաղուց են հետևում։ Այդ քննութիւնը 17-երորդ գործն էր, իսկ 16 գործը տրված է անտառապետ (Խասբօլաղ-Բէգօվին), և սա այդ բոլորը թողել է անհետևանք, թեթև քննութիւններ կատարելուց յետոյ։ Դանդատաւորները կամենում են դիմել աւելի բարձր վարչութեան։

Կրակ

Մի հասկաց պատշաճության մասին

Զաքաթալայի փոքրաթիւ ռուս հասարակութիւնը այսօր մի խիստ զգալի կորուստ ունեցաւ. այսօր սառը հողին յանձնեց տեղվոյն պետական դանձատան աստիճանաւորը տեղացի երիտասարդ Պաւէլ Նիկանորովիչ Կարպէնկոյի մարմինը։ Նրա մահվան լուրը ցնցեց ամենքին, որովհետև ոչ ոքի մտքով չէր անցնի, որ ընդամենը 5—6 օրվայ ընթացքում երիտասարդ և բոլորովին առողջ մարդը կարող է հիւանդանալ և հրաժեշտ տալ այս անհիւրընկալ աշխարհին՝ այն էլ ծաղիկ հասակում։ Նա ընդամենը 27 տարեկան էր։

Հանդուցեալ Պաւէլ Նիկանորովիչ Կարպէնկոն սիրված ու յարգված էր ոչ միայն իր ռուս հասարակութիւնից, այլ և հայ հասարակութիւնից, որի յուզարկաւորութեանը գրեթէ ամբողջ հայ հասարակութիւնը դուրս էր եկել իր վերջին քրիստոնէական-մարդկային պարտքը կատարելու։ Պետական դանձատան պաշտօնեաների կողմից դագաղի վրա դրված գեղեցիկ պսակից զատ՝ կային բազմաթիւ պսակներ հայերի կողմից, որոնք այդպիսով ապացուցին, որ, արդարև, ազնիւ, շիտակ, մաքուր, մարդասէր մարդը արժանի է յարգանքի ու բուռն սիրոյ անխտիր ազգութեան։

Սատ. Բէկ-Յովսէփեան

Տանուտէրի օգնականների հեռացումը

Քարվանսարա, 19 սեպտեմբերի

Գիւղիս տանուտէրութեան ենթակայ են 7 գիւղերը, որոնք կառավարվում են ընտրովի տեղական օգնականներով։ Տանուտէրի հետ ընտրված էին ի թիւս միւս գիւղերի օգնականների և Վերին-Աղդանի երկու օգնականները Լ. Խալաթեան և Յ. Դօվլաթբէգեան, որոնք, պէտք է ասած, բաւական եռանդոտ և գործող երիտասարդներ էին։ Ի՞նչ պատահեց, չը հասկացվեց, օրերումս պրիստաւը արտաքսեց երկուսին էլ և պահանջեց նոր օգնականներ ընտրել։ Հասարակութիւնը ընտրեց նորերին յանձին Կ. Խաչինեանցի և Աւ. Ոսկանեանցի։

Ընտրութիւնները կորցրել են իրանց նշանակութիւնը։ Մ. ք. Եղիլեանց

Աւազակութեան դէմ

Մեծ-Ղարաքիլիսա, 21 սեպտ.

Վաքիրի աւազակախումբը, որը մի տարուց աւելի գործում է անարգել այս շրջանում և որն իր տրամադրութեան տակ ունի մօտ տասն հոգի կուռ ոյժ, դեռ այսօր էլ շարունակում է իր գոյութիւնը։ Նառ այժմ դեռ պասիվ է գործում կամ ուրիշ խօսքով՝ խնդրողի և առաջարկողի դերում է գտնվում և ապրում է առանց զգալի վնաս հասցնելու մասսային, ժողովրդին, բայց որպէս միշտ՝ սրանք էլ կը սկսեն իրանց այսպէս ասած ակտիվ գործունէութիւնը շուտով, և այն մարդիկ, անհատներ կամ համայնքը, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար այսպէս թէ այնպէս նմանների գոյութիւնը երկարելուն նպաստում են, կը զղջան, կը տուժեն, բայց այդ ուշ կը լինի։

Աւազակը, գողը, կողոպտիչը որքան էլ մասսային ժամանակաւորապէս չը նեղացնի, վնաս չը տայ, դարձեալ նրանց գոյութիւնը միշտ էլ աւելորդ է շրջապատին, և, որպէս ձրիակերների վոհմակի, այդ շրջապատը ամեն կերպ պէտք է վերջ տայ դրանց ոնուցանող միջոցներին։

Մեր գիւղացին ունի մի այլանդակ առած, որն ասում է. «Մեռած վնաս չը տուող գայլը թող 100 տարի ապրի»։ Եւ հէնց այս առածի հոգեբանութեամբ էլ առաջնորդվում են, միանգամայն անուշադրութեան անելով այն իսկական ճշմարտութիւնը, որ գայլը միշտ էլ մնում է գայլ և նա ոչ մի տարբերութիւն չէ դնում սրա կամ նրա միջև, այսօր սրան է պատառոտում, վաղը նրան, և այսպէս անվերջ։

Այսպէս էլ աւազակն է, գողը, կողոպտիչը և այլն։ Գաղափարական աւազակութիւն չը կայ. և եթէ այդ անունով արվում է, անպայման նա իր տեսակի քաղաքագիտութիւն է, որ ոչ թէ մասսայի օգտին է գործվում, այլ նրան խաբելով աւազակներն իրանց ինչին գոյութիւնն են երկարում։

Այսպէս էլ Վաքիրի աւազակախումբն է կամ նմաններն են անում, որոնք չը նայած, որպէս ասացի, այսօր զգալի վնաս չեն տալիս շրջապատին, բայց միշտ պատրաստ կանգնած են նրա գլխին «Դամոկլեան սրի» նման և իրանց ապահովելու համար գիւղեր, գաւառներ են զոհում։

Ժողովրդական ազգանների առաջը պէտք է առնել մասսայի միահամուռ և լայն մասնակցութեամբ, ոյժով։ Պէտք է վերջ տալ թուլամտութեան և ասպարէզ նետվել խմբովին, կուելով զանազան տեսակի աւազակութեան և գողութեան դէմ, որով վերջ կը դրվի հասարակութեան հանդիստը վրդովելուն, վարքերի ապականելուն։ Այս է միակ փրկութիւնը ժողովրդի տեսակ-տեսակ վամպիրներից։

Հասարակութիւնը իր գործունէութիւնը կանոնաւոր տանելու համար, պիտի միջոցներ ստանայ կառավարութիւնից, որով չարիքի դէմ կուելը լինի օրինաւոր և բեղմնաւոր։ Կառավարութեան ներկայացուցիչների և ժողովրդի միջև պէտք է լինի սերտ յարաբերութիւն, վստահութիւն, որով գործեն միասին, վերջ տալով այսպիսի դրութիւններին։

Անցորդ

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

II

Ատրպատական, 11 սեպտեմբերի

Շաբաթ երեկոյեան, սեպտեմբերի 10-ին, հայոց թեմական դպրոցի դահլիճում կայացաւ կաթողիկոսական ընտրութեան առիթով հաւաքված պատուիրակների երկրորդ նախապատրաստական ժողովը։ Այս անգամ մասնակցում էին 24 պատուիրակ 27 ձայնով։ Ժողովի նախագահ ընտրվեց գաղտնի քուէարկութեամբ Ռ. Աստուածատուրեան։

Դրվեց դաշնակ կաթողիկոսական թեկնածուների—Օրմանեան, Կարապետ, Դուրեան, Սուրէնեան և Մեսրոպ եպիսկոպոսներ—անունները և սկսվեց քննադատութիւն այս անունների շուրջը։

Նախագահ.—Դնում եմ Կարապետ եպիսկոպոսի անունը և խնդրում եմ կարծիքներ յայտնել։

Յով. Սերգէյեան (Ատրպատականի պատ.).—Վերջին ժամանակները ինչ-որ լսել ենք Կարապետ եպ.-ի մասին. մենք չենք կարող պաշտպանել նրա թեկնածութիւնը։

Ալ. Սանոյեան (Անդիժանի պատ.).—Ի՞նչ էք լսել նրա մասին, պարզեցէք ձեր ասածը. այն լուրերից շատերը չը հաղորդեցին։

Նիկ. Աագեան.—Ես թէև անձամբ չեմ ճանաչում Կարապետ եպ.-ին և սրանով չեմ էլ ուզում պաշտպանած լինել նրա թեկնածութիւնը, բայց ես ունեմ հետս բերած ռուս լրագիրներ, որտեղ կան տեղեկութիւններ թէ նրա գործունէութեան և թէ կենսագրութեան մասին. լաւ կը լինէր կարդայինք այդ բոլորը և նրան ճանաչողները ճշդէին այդ ամենը։

Նախագահ.—Անշուշտ կան մեր մէջ պատուիրակներ, որոնց մանդատ է տրված պաշտպանելու Կարապետի թեկնածութիւնը. լաւ կը լինէր, որ նրանք ծանօթացնէին մեզ նրա հետ։

Նիկ. Սաթունեան. — Պատուիրակները ուզում պէտք է ձայն տան. կաթողիկոսական թեկնածուին թէ պատգամաւորին. ես կարծում եմ, որ աւելի շուտ պատգամաւորին։

Նախագահ. — Բայց, այնուամենայնիւ, մենք պէտք է պատուիրակների մեծամասնութեան կարծիքը իմանանք կաթողիկոսական թեկնածուի մասին, որ ըստ այնմ էլ պատգամաւոր ընտրենք։ Պարոններ, խնդրում եմ կարծիքներ յայտնեցէք դրված թեկնածուի մասին։

Երկար լռութիւն։

Նախագահ.—Ինչպէս երևում է, Կարապետ եպ.-ի մասին խօսող չը կայ, ուստի ես կառաջարկեմ խօսել ուրիշների մասին։

Սաղ. Բախչեան (Սաւրօպոլի պատ.).—Ինչպէս նկատում եմ, պատուիրակներից շատերը լաւ ծանօթ չենք դրված թեկնածուների գործունէութեան հետ, ուստի ես կը խնդրէի առաջարկել այստեղ ներկայ եղող ոչ պատուիրակներին խօսք տալ և խնդրել, որ մեզ ծանօթացնեն այդ մարդկանց հետ։

Նախագահ.—Ես այդ առաջարկութիւնը գտնում եմ անյարմար, որովհետև դա պատուիրակներս իրաւունքն է, և եթէ մենք չենք ծանօթացել, դա մեր մեղքն է։

Յով. Փարեմուզեան (Պետրօվսկի պատ.).—Ես կարծում եմ, որ եթէ դրված թեկնածուի մասին ոչինչ չեն խօսում, դա նշանակում է՝ չեն ցանկանում, ուրեմն և պէտք է հանել նրա անունը թեկնածուների ցանկից։

Նախագահ.—Ես կը դնեմ Ս. Բախչեանի առաջարկութիւնը քուէարկութեան։

Քուէարկութիւնը տուեց միայն մէկ ձայն։

Նախագահ.—Պարոններ, դնում եմ Օրմանեանի անունը. խնդրում եմ խօսել նրա մասին։

Յով. Սերգէյեան.—Ես ճանաչում եմ Օրմանեանին և նրան դէմ լինել չէ կարելի. ցանկալի թեկնածու է նա։

Մկր. Հախվերդեան (Վլադիկավկազի պատ.).—Ի՞նչպէս կարելի է նրան ցանկալի թեկնածու համարել, երբ Թիւրքիայում հայերին հաւի նման կոտորում էին, իսկ նա լռում էր. մեթէ կարելի է այդպիսի մարդուն կաթողիկոս ընտրել։ Երբ մենք այստեղ Թիւրքիայի որբերի համար փող հաւաքեցինք Արէստակէս եպիսկոպոսի օրով և ուղարկեցինք նրան, այնուհետև ինչքան հաշիւ պահանջեցինք նրանից՝ չը կարողացանք ստանալ։

Դ. Սուլթանեան.—Ինչպէս յայտնի է, Թիւրքիայի հայերը նրան չեն սիրում և հէնց որ նրանք մի փոքրիկ ազատութիւն ստացան, իսկոյն գահընկէց արին Օրմանեան պատրիարքին։ Բացի դրանից՝ նա կաթոլիկ, պահպանողական շէյայի աշակերտ է, որին մենք համակրել չենք կարող։

Նախագահ.—Դարձեալ ով ի՞նչ կարող է ասել։

Երկար լռութիւն։

Նախագահ.—Պարոններ, դնում եմ Դուրեանի անունը։

Դ. Սուլթանեան.—Ես կարծում եմ, որ Դուրեանի թեկնածութիւնը ամենից ցանկալին է. նա, յայտնի է որ, շիտակ ընտրութիւն ունեցող մարդ է, և նրան, համեմատելով եղած միւս թեկնածուների հետ, գտնում եմ ամենից արժանաւոր։ Մենք խօսում էինք Իզմիրլեանի մասին և նրան անուանում էին «Երկաթէ պատրիարք», բայց նա մի մեծ ինքնուրոյնութիւն ցոյց չը տուեց։ Դուրեանը թէպէտ վարչական մարդ չէ, բայց մի մոռացէք, որ Թիւրքիացիք Օրմանեանից յետոյ նրան ընտրեցին պատրիարք. իսկ անցեալ կաթողիկոսական ընտրութեանը նա երկրորդ ընտրելին հանդիսացաւ։

Յով. Փարեմուզեան.—Մենք առհասարակ կառավարիչ կաթողիկոսներ քիչ ենք ունեցել, Դուրեանն էլ նրանցից մէկը կը լինի, բայց միևնոյն ժամանակ նա կը լինի մաքուր մարդ։

Դրվում է Մեսրոպ եպիսկոպոսի անունը։

Դ. Սուլթանեան.—Մեսրոպ եպ.-ն էլ ցանկալի է. թէպէտ նրա ճեմարանի տեսչութիւնը տխուր տպաւորութիւն թողեց, բայց և պէտք է խոստովանել, որ վատ ժամանակի եղաւ այդ տեսչութիւնը։

Դարձեալ երկար լռութիւն։

Դրվում է Սուրէնեան տեղակալի անունը։

Յով. Փարեմուզեան. — Սուրէնեանցին մենք լաւ ենք ճանաչում։ Ծանօթ ենք նրա դրական և բացասական կողմերին։

Նիկ. Սաթունեան.—Պարոններ, որովհետև Սուրէնեանց սրբազանը լուրջ թեկնածու է համարվում, որքան ես գիտեմ, ուստի կառաջարկեմ երկար խօսել նրա մասին։

Նախագահ.—Ես կը յիշեմ նրա վերջին մի երկու դէպքը, այն է՝ պրոֆ. Մարրի և Երուանդ Նախկին վարդապետի հետ եղած դէպքերը։

Դարձեալ լռութիւն։

Նիկ. Սաթունեան.— Թոյլ տուէք, պարոններ, ինձ ես մի քանի խօսք ասել առաջարկված թեկնածուների մասին։ Ես մինչև վերջը լռում էի՝ կամենալով ձեզանից տեղեկութիւններ լսել այդ անունների շուրջը։ Այստեղ առաջարկեցին լրագիրներ կարդալ, կողմնակի մարդկանց թոյլ տալ խօսելու և մեզ ծանօթացնելու թեկնածուների հետ։ Բայց, պարոններ, նախ քան խօսելը թեկնածուի մասին՝ պէտք է իմանալ, թէ ինչ է էջմիածինը. դա մի այնպիսի բան է, որ նոյնիսկ եթէ ինքը ս. Գրիգոր Լուսաւորիչը կենդանանայ, ոչինչ չէ կարող անել։ Երկու երեք տարի առաջ հէնց այստեղ հաւաքված մենք մեծ ոգևորութեամբ ընտրեցինք Իզմիրլեան «Երկաթէ պատրիարքին», բայց տեսաք ինչ դարձաւ նա էջմիածնում։ Երկաթէ պատրիարքը դարձաւ թղթէ պատրիարք։ Դուք գիտէք, որ այս խնդրում վճռող ձայնը Թիւրքահայերին է պատկանում, և այդ պատճառով էլ մենք խնդրի բարոյականը մի կողմ թողնելով՝ պէտք է հետևենք գործնականին։ Այստեղ տուեցին Օրմանեանի անունը, բայց Օրմանեանից դեռ չեն վերացել նրա վրա եղած մեղադրանքները և արատը առաջարկում են Դուրեանին, բայց ես շատ կասկածում եմ, որ Թիւրքիացիք նրան ձայն տան. նա շատ ցանկալի, լաւ մարդ է, բայց զուրկ է կառավարչական ընդունակութիւնից և նա էլ կը դառնայ էջմիածնում թղթէ պատրիարք։ Ասվեց Մեսրոպ եպ.-ի մասին. ես նրան շատ լաւ ճանաչում եմ, եղել է իմ ուսուցիչը, գիտնական մարդ է, բայց նա ևս կառավարել չէ կարող։ Խօսք եղաւ Սուրէնեանի մասին, և նրան պաշտպանողները տալիս են նրա անունը ոչ թէ նրա համար, որ նա յարմար է, այլ որ նա կը լսէ ուրիշներին։ Ցիշվեց Խրէն եպ. Մուրադբէգեանը. նա ևս լաւ մարդ է, երիտասարդ, նախկին ուսուցիչ, բայց չէ կարող անցնել։ Ահա այն անունները, որոնց մասին խօսք եղաւ։ Պարոններ, ես կառաջարկեմ մեր պատգամաւորին ոչ մի մանդատ չը տալ, ազատ թողնել նրան, բայց միևնոյն ժամանակ պատգամաւոր ընտրել այնպիսի մարդու, որ մեր իղձերի թարգմանը լինի։ Աւելի լաւ է ժամանակաւ չը լինենք, դիմենք գործնականին, ընտրենք մեր պատգամաւորին։

Դ. Սուլթանեան.—Ես կարծում եմ, որ մենք ժամանակաւ չենք լինում խօսելով կաթողիկոսական թեկնածուների մասին, իսկ ինչ վերաբերում է նրան, որ մեր ձայները նշանակութիւն չունեն, դրան կասեմ, որ Թիւրքիացիք միշտ լսում են ռուսաստանցիներիս։

Նիկ. Աագեան.—Ինչքան էլ մեզ համար դժուար լինի, այնուամենայնիւ գնացող պատգամաւորը պէտք է իմանայ մեծամասնութեան կարծիքը։

Նախագահ.—Ես կը դնեմ 6 թեկնածուներին էլ քուէարկութեան միայն թերթիկներով. ով որ նրանցից մեծամասնութիւն կը ստանայ, նա էլ կը համարվի Ատրպատականի թեմի ցանկալի թեկնածուն։

Քուէարկութիւնը տուեց հետևեալ արդիւնքը. Դուրեան—13, Օրմանեան—5, Մեսրոպ—3 և Կարապետ—1։

Այդպիսով Ատրպատականի թեմի ցանկալի թեկնածու համարվեց Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան։

Այնուհետև դրվեց քուէարկութեան այն հարցը, թէ երկրորդ թեկնածուի վերաբերմամբ ազատ թողնել պատգամաւորին թէ ոչ. վճռվեց ազատ թողնել։

Ժողովը փակվեց գիշերվայ ժամը 12-ին՝ թողնելով միւս օրվան թեմական պատգամաւորի ընտրութիւնը։

Ս. ք. Ատլանեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԱՌԱՋԻԿԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

IX

Բարգէն եպիսկոպոս Կիւլեսերեան

Ծնված 1868 թուին, եպիսկոպոս ձեռնադրված 1910-ին, առաջնորդ Գաղատիոյ, 43 տարեկան։

Որովհետև Բարգէն եպիսկոպոս Կիւլեսերեանը համեմատաբար դեռ երիտասարդ է և իր գործունէութեամբ անծանօթ շատերին, ուստի կարևոր եմ համարում այստեղ նախ մի համառօտ կենսագրական ակնարկ դնել, քաղելով այն թիւրքահայ «Տաճար» շաբաթաթերթից (տես նաև «Հովիտ» 1910 թ., № 28)։

Բարգէն եպիսկոպոսը ծնված է Այնթապում 1868 թուի մարտի 23-ին, նախնական կրթութիւնն ստացել ծննդավայրի ուսումնարանների մէջ։ 1889 թ. կ. Պոլիս երթալով՝ մտել է Արմաշի դպրեվանքը, ուր 1890 թ. ստացել է դպրութեան և սարկաւագութեան աստիճանները, իսկ 1895-ին դպրեվանքի վերատեսուչ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանի ձեռքից ընդունել է քահանայական ձեռնադրութիւն և վերադարձել Եզնիկի մասին ներկայացնելով մի քննական ուսումնասիրութիւն, որ յետոյ տպագրութեամբ լոյս տեսաւ։ Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանանալով, նա 1897-ին մանաւոր վարդապետութեան գաւազան ստացաւ։ 1896 թ. սեպտեմբերի 21-ին Կ. Պոլիս Եէնիքէօյի եկեղեցու քարոզիչ կարգվեց, իսկ Օրմանեան սրբազանի պատրիարք ընտրվելուց յետոյ՝ նշանակվեց քարտուղար անձնական դիւանի, նոյն ժամանակ քարոզիչ Պէշիկթաշի եկեղեցու, ստանձնելով դասեր նաև Մաքրուհեան վարժարանի մէջ։ 1897 թ. մարտի 13-ին ազգ. կենտր. վարչութեան խառն ժողովի կողմից նշանակվեց «օգնական փոխանորդ կաթողիկոսական տեղապահութեան Կիլիկիոյ», բայց շատ բանաւոր պատճառներով չընդունեց այդ պաշտօնը, և կենտր. վարչութիւնը, փոխելով իր նախորդ որոշումը, 1897 թ. սեպտեմբերի 1-ին կարգեց նրան առաջնորդական տեղապահ Ճանիկի (Սամսօն)։ 1897 թ. սեպտեմբերի 21-ին Օրմանեան սրբազանի ձեռքից ընդունեց ծայրագոյն վարդապետութեան գաւազան։

Ճանիկի վիճակի մէջ երկու տարվայ չափ պաշտօնավարելուց յետոյ՝ 1899-ին ազգ. կենտ. վարչութիւնը նրան Սամսօնից Մուշ տեղափոխեց՝ Տարօնի ընդհանուր վանահոր և առաջնորդական տեղապահի պաշտօնով։ Մշոյ մէջ տակաւին տարին չը բոլորած բանտարկվում է (մինչ միւս կողմից առաջնորդ է ընտրվում Տրապիզոնում) և հսկողութեան ներքոյ տեղափոխվում է Կ. Պոլիս։ Այդ ժամանակ Մուշ յանուն որբերի ուղարկված մի գումարի գործածման խնդրի առիթով դատափետվում է հայ մամուլի կողմից՝ այնպիսի մի ժամանակ, երբ անհնարին էր պարզել դրամի ինչ նպատակի համար գործածված լինելը։ Օսմանեան սահմանադրութեան հռչակումից յետոյ Բարգէն եպիսկոպոսը փառաւոր կերպով արդարացաւ իր վրա բարդված մեղադրանքներից, սրտի բերկրութիւն և մեծ գոհունակութիւն պատճառելով իր բազմաթիւ համակրողներին ու բարեկամներին, որոնք տեսան քննադատութիւնների բացարձակ անհիմն լինելը։

1901 թ. փետրվ. 21-ին Տրապիզոնի գաւառական ընդհանուր ժողովը կրկնում է իր ընտրութիւնը, բայց ժամանակի բրոնապետական կառավարութիւնը արգելում է նրան Տրապիզոն երթալ, և նա մնում է Պոլսում՝ հսկողութեան ներքոյ, թէև զարմանալի հակասութեամբ նրան տրվում է Գ. կարգի Մէջիդէ պատուանշանը։ Նոյն տարին մինչև սեպտ. քարոզում է Պերայի ս. Երրորդութեան եկեղեցին և ապա՝ նշանակվում է Դալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցու քարոզիչ և ազգային մատենադարանի մատենադարանապետ։ 1902-ին Մկրտիչ Ս. կաթողիկոսը «հաւատացեալ զանձնանուէր վաստակոց և եռանդեան բանիւ և գրով»՝ նուիրում է նրան վարդապետական ականաւոր լանջախաչ։

1906-ին Մարաշի առաջնորդ է ընտրվում, բայց պատրիարքարանը չէ համարձակվում կառավարութեան համաձայնութիւնն ուզել։ 1907-ի վերջերը նշանակվում է «փոխ-վանահայր և վերատեսուչ դպրեվանքում»։ 1909 թ. մարտի 6-ին Գաղատիոյ գաւառ. ընդհանուր ժողովը ընտրում է նրան առաջնորդ։ Միևնոյն ժամանակ առաջնորդ է ընտրվում Դիարբէքիրում և առաջարկներ է ընդունում ուրիշ տեղերից։ Բայց յարգելով Գաղատիոյ թեմին տուած խոստումը՝ գնում է այստեղի առաջնորդ և նոյն թեմի վրա էլ ձեռնադրվում է եպիսկոպոս։

Բացի առաջնորդական պաշտօններից՝ նա վարել է նաև ուսուցչութեան պաշտօն, կարգի է դրել Դալաթիոյ ազգային մատենադարանը, հրատարակել է եկեղեցադիտական «Լոյս» շաբաթաթերթը երկու տարի շարունակ, որն աչքի էր ընկնում իր հմտալից, լուրջ և բազմակողմանի և միևնոյն ժամանակ ժողովրդական բովանդակութեամբ։ 1890 թուականից սկսած աշխատակցել է հայ մամուլի բազմաթիւ օրգաններին, առաւելապէս մշակելով եկեղեցադիտական, պատմական և բանասիրական նիւթեր դիւրըմբռնելի, խրթնաբանութիւններից և մթութիւններից բոլորովին հեռու, ոճով։ Նրա բազմաթիւ գրական աշխատանքներից առանձնապէս նշանաւոր և արժէքաւոր են «Դովք», «Ցլուք», «Հռոմկլա», «Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն», «Ցիշատակարան Պատմահան Գրիգոր պատրիարքաց

քի», «Քարոզներ», «Ժողովրդին ուսնացոյց» և այլն։

Ցիրաւ՝ մի բեղմնաւոր գործունէութիւն, որ արժանի է ամենայն խրախուսանքի։ Կենսագրական այս համառօտ ակնարկից մենք տեսանք, որ նա Արմաշի դպրեվանքի տուած ամենից աւելի յայտնի և գիտուն բանասէրը լինելով հանդերձ՝ միևնոյն ժամանակ թեմի մարդ է և անդադար վարչական պաշտօններ է վարել ու քարոզիչ եղել մինչև հիմա։ Մինչև այսօր ոչ մի գիտողութիւն չէ եղել նրա վարչական գործունէութեան մասին բոլոր իր վարած պաշտօնների մէջ։

Բարգէն եպիսկոպոսը ջերմապէս նուիրուած է իր գործին, շատ լաւ ճանաչում է մեր ազգի անցեալն ու ներկան և այն եկեղեցին, որին ծառայում է մանկութիւնից ի վեր։ Անձանձրոյթ և անշահախնդիր մի աշխատող է նա, հաստատամիտ և ձեռներէց։ Ներկայ ժամանակի պահանջներն էլ շատ լաւ ըմբռնելով՝ նա սկզբից ի վեր կողմնակից է եղել հայոց եկեղեցու հին ազգային բարեփոխութեան և վերանորոգութեան, որի մասին ծրագիր էլ կազմել է։ Այդ ծրագրի հետ մենք անցեալ աշնանը ծանօթացրինք «Մշակի» ընթերցողներին։

Այս բոլոր առաւելութիւններն ի նկատի ունենալով, մենք վստահութեամբ դնում ենք նաև երիտասարդ Բարգէն եպիսկոպոս Կիւլեսերեանի անունը կաթողիկոսական աթոռի թեկնածուների ցանկում։ Մեր անձամբ ճանաչած թիւրքահայ երիտասարդ հոգևորականութեան մէջ նա ամենից աւելի աչքի ընկնողներից մէկն է, եթէ չասենք ամենից աչքի ընկնողն է։

Երուանդ Տէր-Մինասեան

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Վերադարձաւ Գօրուց Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը։

✦ Վերադարձաւ Թիֆլիսի նահանգապետ Զերնեավսկին։

✦ Առաջիկայում մի պատգամաւորութիւն է ներկայանալու Կովկասի Փոխարքային և խնդրելու է, որպէսզի Կովկասեան լեռնընդմէջը ապագայ երկաթուղին անցնէ Քութայիսի միջով։

✦ Վլադիկավկազից «Р. Сл.»-ի թղթակիցը հեռագրում է, որ այնտեղ է ժամանել Կովկասի Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլովը, որին յանձնարարված է զեկավարել աւագակապետ Զելիմ-խանի դէմ ձեռք առնված միջոցները և մանրամասնին ընթերցում կատարել յարձակման մանրամասնութիւնների գործում։ Սպասվում են արտակարգ միջոցներ։ Լուրեր են պտտվում Վեդէնի շրջանը պաշարման վիճակի մէջ յայտարարելու մասին։

✦ Մեզ հաղորդում են, որ շաբաթ օր, հոկտեմբերի 1-ին, Թիֆլիսի Հասարակական Կուրսում (Բօրսայի դահլիճ) Ս. Քալանթարը թիֆերատ կը կարդայ «Կեանքի թանդանալու հարցի» մասին։ Բիֆերատից յետոյ կը լինի զրոյց և գրական-երաժշտական բաժին։

✦ Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ Ց. Ցարութիւնեան նուիրաբերել է մի յատուկ գուբար գիւղատնտեսական դպրոց բանալու Հին-Նախիջևան քաղաքում։ Այժմ մեզ տեղեկացնում են, որ դպրոցի շէնքը արդէն պատրաստ է և առաջիկայ հոկտեմբերի 1-ին, կիրակի օր, տեղի կունենայ նրա օծումը։ Ցանկանում ենք դպրոցին աջողութիւն։

✦ Եղանակները Թիֆլիսում սկսում են ցրտել։

✦ Որովհետև Թիֆլիսի քաղաքային դումայի նոր ձայնաւորների ընտրութիւնները մօտենում են, նախընտրական ժողովները զանազան խմբակների մասնակցութեամբ շարունակվում են։

✦ Կիրակի օրը Զուբալովեան Ժողովրդական Տանը կայացաւ ժողովրդական համալսարանի կազմակերպած առաջին ցերեկոյթը, որ գրաւել էր մեծ բազմութիւն։ Ցերեկոյթը նուիրված էր անմահ քննադատ Բէլինսկիի ծննդեան 100-ամեակի տարեդարձին։ Սկզբում Տարասովիչը նուագեց Շոպէնի «Funebre»-ը։ յետոյ Պալմովը դասախօսեց Բէլինսկիի մասին։ Վերջում եղան նուագածութիւն և ոտանաւորներ։

✦ Հոկտեմբերի 1-ին Զուբալովեան Ժողովրդական Տանը կը լինի ժողովրդական համալսարանի ընկերութեան կազմակերպած երկրորդ ցերեկոյթը։ Պալմովը կը դասախօսէ XIX դարի երկրորդ կէսի ռուսական գրականութեան պատմութեան մասին։

✦ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը կը կայանայ սեպտեմբերի 29-ին։

✦ Սեպտեմբերի 24-ին Վարդիսուբանսկայա փողոցի վրա մի կատաղած շուն յարձակվեց քաղաքապահ ոստիկան Իոսիֆ Ցեկլաուրիի վրա և կծեց։ Ոստիկանը շանը գնդակահարեց, իսկ իրան տարել են Պատէօբեան կայարանը։

✦ Սեպտեմբերի 25-ին շուրջկալի ժամանակ զանազան թաղամասերում կալանաւորվեցին անցագրեր չունեցող 91 հոգի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մոսկվա, 11 սեպտեմբերի

Ամսիս 10-ին ամարային ակումբի դահլիճում՝ նորեկ դերասանուհի տիկ. Քնարիկ Աբովեան, տեղիս սիրողների մասնակցութեամբ խաղաց՝ «Զարաճճի», «Սարսափելի անցք» և «Մինիկը»։

Խաղը բաւական թոյլ անցաւ. սիրողները, որոնց մեծամասնութիւնը նոր էր բեմ բարձրանում, չը կարողացաւ գէթ պահպանել անսամբլը. տոմսակներ գնած հասարակութեան 1/4 մասը չէր եկել ներկայացում, որովհետև՝ առանց նորից յայտարարելու՝ ներկայացումը մի օրով յետաձգել էին։

Վերջին մի տարվայ ընթացքում տեղի է ունեցել 7—8 ներկայացում, որոնցից 4-ը տուել էին նորեկ դերասանները, որոնք իրանց խաղով ոչնչութիւն էին։ Մակոյկ

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Պատրանք, վէպ, Վահունիի, Պեատիգորս, 1911 թ., էջ 340, գ. 1 ր.։ 2) Մասնիչ, պատմուածք, Վահունիի, Պեատիգորսկ, 1911 թ., էջ 112, գ. 40 կ.։ 3) Ցարութիւն վէպ Լ. Ն. Տոլստոյի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի, Բ. ուղղված հրատարակութիւն, Թիֆլիս, 1911 թ., էջ 610, գ. 1 ր. 50 կ.։ 4—5) Աննա Քարէնինա, Լեվ Տոլստոյի, թարգմ. Երուանդ Օտեանի, Ա. և Բ. հատոր, կ. Պոլիս, 1911 թ.։ I հատորի գինն է 15 ղրուշ, էջ 234, II հատորի գինն է 15 ղրուշ, էջ 262։ 6) Կեանքի խորը զուակներ, Մ. Ղազարեանցի, Ալէքսանդրոպոլ, 1911 թ., էջ 64, գ. 15 կ.։ 7) Ակկօրդներ, բանաստեղծութիւնների II գրքոյկ, Սիմ. Բաբիեանի, Ալէքսանդրոպոլ, 1911 թ., էջ 36, գ. 25 կ.։ 8) Ալազազ, Մովսէս Դուկասեանի, Ալէքսանդրոպոլ, 1911 թ., էջ 15, գ. 5 կ.։ 9) Ժողովրդական երգարան, բանաստեղծութիւններ Սմբ. Իւղբաշի, Բաքու, 1911 թ., էջ 31, գ. 10 կ.։ 10) Արարատեան բարքաւոր ժողովրդական բառերի ցանկ բառապնջիկ, Սիօն վ. Տէր-Մանուէլեանի, Վաղարշապատ, 1911 թ., էջ 23. 11) Եղիշէի շորս յեղանակները հնագոյն զրչագրի մը մէջ, հ. Ղևոնդ Տայեանի, Վենետիկ, 1911 թ., էջ 272, գ. 2 ֆրանկ։ 12) «Թիզուդէբանի Արշիլի Զօրչաձիսա», III մաս, Թիֆլիս, 1911 թ., էջ 215, գ. 65 կ.։ 13) Տաճար շաբաթաթերթի № № 32, 33 և 34, կ. Պոլիս, 1911 թ.։ 14) Կոշնակ շաբաթաթերթի № № 35, 36 և 37, Նիւ-Եորկ, 1911 թ.։ 15) Արագած շաբաթաթերթի № 15, Նիւ-Եորկ, 1911 թ.։ 16) Աղբիւր ամսագրի № 9 (սեպտ.) 1911 թ., Թիֆլիս։ 17) Բրժիշկ ամսագրի № 7 (յուլիս) 1911 թ., Թիֆլիս։ 18) «Armenia» ամսաթերթի, 1911 թ. օգոստոսի համարը, Նիւ-Եորկ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 18 սեպտեմբերի

Հոսաքաղաքական խորհուրդս, դպրոցական շահերն ի նկատի առնելով, պարտք է համարում դպրոցական խնդրով շահագրգռված հիմնարկութիւնների ուշադրութիւնը հրաւիրել հետևեալ տգեղ երևոյթի վրա, որ վերջին տարիներս բաւական յաճախ կրկնվում է մեր դպրոցական կեանքում։

Ներկայ ուսումնական տարվայ համար տեղիս ծխական դպրոցին հարկաւոր էին հինգ ուսուցիչ-ուսուցչուհիներ։ Ցայտարարում ենք մեր պայմանները լրագրութեան մէջ ու բազմաթիւ խնդրատուներից հնգին ընտրելով՝ օգոստոսի 11-ին հեռագրով հրաւիրում ենք, միաժամանակ յայտնելով, որ նոյն ամսի 22-ին պիտի լինեն տեղումս։

Ուսուցիչ Սահակ Տէր-Ցարութիւնեան նոյն օգոստոսի 16-ին յայտնում է իր համաձայնութիւնը, բայց փոխանակ իր խոստման համաձայն օգոստոսի 22-ին տեղումս լինելու՝ 25-ին հեռագրում է. «По неожиданнымъ причинамъ отказываюсь».

Վարժուհի Համասփիւռ Զօրեանը 24-ին յայտնում է իր համաձայնութիւնը, աւելացնելով միայն թէ՝ «դուրս կը գնամ 26-ին», այն ինչ 27-ին հրաժարվում է։

Իսկ վարժուհի Հեղինէ Մանուկեան ոչ միայն անպատասխան թողց կրկնակի հեռագիրներս, այլ և չը բարեհաճեց վերադարձնել պատասխանի համար վճարած դպրոցի աղքատիկ կօպէկները։

Ուսուցիչ-ուսուցչուհիների այսպիսի վարմունքի շնորհիւ ստիպված եղանք 5 ուսուցիչ հրաւիրելու համար մօտ 30 բուբլի հեռագրի փող ծախսել, և որ գլխաւորն է՝ դպրոցիս կանոնաւոր ուսումն յետ ընկաւ մինչև այժմ ու տուժեցին 500 անմեղ երեխաներ։

Նախագահ Ախալքալաքի հայոց եկեղ.-ծխ. հոգաբարձութեան՝

Վահրամ Վահրամեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Ֆրանս-գերմանական յարաբերութիւնները դարձան բարեկամական։

✦ Հոկտ. 15-ին Պետական Դումայի առաջին նիստում հարցապնդում է ուղղվելու գեներալ Կուրլովի գործունէութեան մասին։

✦ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան դեսպանները Դարդանելը, որովհետև այդ քայլը անմիջապէս կը բռնկէ եւրոպական պատերազմ։

✦ Եթէ թիւրքական կաբինէտի մէջ վերջնականապէս չը մտնեն չափաւոր մինիստրներ, այն դէպքում թիւրքիայի բաժանումը եւրոպական պետութիւնների մէջ անխուսափելի է։

✦ Եւրոպան որոշել է թոյլ չը տալ թիւրք-յունական պատերազմը, թէև երկու պետութիւնների զօրքերը՝ կազմ ու պատրաստ՝ կռուի հրամանին են սպասում։

✦ Թիւրքերը սոսկալի տանջանքների են ենթարկում ձեռքներն ընկած սերբերին, իտալացիներին, յոյներին։

✦ Թիւրքիայում, լուրերին նայած, յայտարարվելու է զինուորական դիկտատուրա։ Դիկտատոր լինելու է Քեամիլ փաշան։

✦ Աֆրիկայի մահմեդականները սրբազան կռիւ յայտարարեցին քրիստոնեաների դէմ։

✦ Աւստրիան և Գերմանիան արտակարգ միջոցներ են ձեռք առել և ուշի ուշով հսկում են որ ոչ մի խանգարում Բալկանների վրա տեղի չունենայ։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ տեղեկութիւններ չեն ստացվել բօյգարական մոբիլիզացիայի մասին։

✦ Աւստրիան խիստ ոճով իմաց տուեց Իտալիային, որ նա ամեն կերպ խափանելու է բալկանեան ծովափին ապասվող ակտիվ գործողութիւնները։

✦ Իտալիան անագին քանակութեան զէնք ու ռազմաթերք պատուիրեց Գերմանիայում և Բէլգիայում։

✦ Իտալական նաւերը պարբերաբար ռազմամթերք են փոխադրում ալբան ապստամբների համար։

✦ Իտալիան, մերժելով Աւստրիայի և Գերմանիայի դիմումները միջնորդութեան մասին, մերժեց նաև Ռուսաստանի առաջարկութիւնը։

✦ Եւրոպական կաբինէտները Պոդգորիցայից ստացան հակիրճ հեռագիր. «Բռնկվեց ապստամբութիւն Ալբանիայում»։

✦ Պարսից կառավարութիւնը Թիւրքիայից երաշխաւորութիւն ստացաւ, որ Սալար-ուդ-Դովլէն չէ կարող ապաստանել Թիւրքիայի սահմաններում։ Պարսից կառավարութիւնը վճռել է մահվան պատժի ենթարկել ապստամբ Սալարին, եթէ վերջինս գերի ընկնի։

✦ Նոր տեղեկութիւն ստացվեց, որ էկս-շահը՝ ծպտեալ՝ Պարսկաստանի սահմաններումն է։

✦ Օդեսայում երևան հանվեց ժանտախտի նոր դէպք։

✦ Ցեղափոխական շարժումը Չինաստանում ընդարձակ չափեր է ընդունել։

✦ Այս տարի խօլերա երևալու օրից ամբողջ Ռուսաստանում հիւանդացան ընդամենը 3327 մարդ, մեռան 1569 մարդ։

✦ Խօլերան Թիւրքիայում, չը նայած սաստիկ ցրտերին, շարունակում է մեծ զոհեր տանել։

✦ Աւստրիան նոր «աննեկսիայի» է պատրաստվում։

✦ Պետական Խորհրդի նախահաշիւով որոշված են հետևեալ տարեկան ռոճիկները. կոմս Վիտտէին 25,000 ր., Ալէքսէեվին 20,000 ր., Դուրնովոյին 12,000 բուբլի։

✦ Օդագնաց Վասիլեվը, որը վայր ընկնելով կտրել էր ձախ ոտը և մարմնի զանազան մասերում ծանր ջարդուածքներ ստացել, այժմ ապաքինվում է նրա. կեանքը վտանգից ազատ է։

✦ Հերքվում է կաղէտների և հոկտեմբերեանների միանալու լուրը։

✦ Հրաժարվեց Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆաքուլտէտի դեկան պրոֆ. Ժուկովսկին։

✦ Դոնի Կալազնոյ-ատամանի պաշտօնական թղթից երևում է, որ Նովոչերկասկի բանտը գտնվում է սոսկալի հակասանիտարական պայմանների մէջ և որ այնտեղ գործադրվում է մարմնական պատիժ։

✦ Մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցէվ կը գնայ Ղրիմ՝ հէնց որ այնտեղից վերադառնայ ներքին գործերի մինիստր Ա. Մակարովը։ Կոկովցէվը, Ղրիմում կը մնայ 3—4 օրից ոչ աւելի։

✦ Կազանի օրբերի դատարանում, որի նախագահն է հոկտեմբերեան Գոզնէվը, երևան է հանվել մօտ 2 միլիոն բուբլու վատնում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

24 սեպտեմբերի

ԼՕԶ։ Մի քանի չարագործներ ներս խուժելով երկաթուղու վագոնը՝ երկաթուղային դրամատարից յափշտակեցին 11,800 բուբլի, յետոյ անյայտացան։

ԲԵՐԼԻՆ։ Բանւորների գործադուլի պատճառով շատ մեքենագործ գործարաններում աշխատանք չը կայ։

ԱՏԿԱՐՍԿ։ Վախճանվեց խոշոր հողատէր Իվանովը, որ յօգուտ տեղական կրթական հիմնարկութիւնների կտակեց 100,000 ր.։

ՕԴԵՍՍԱ։ Համալսարանի ռեկտոր նորից ընտրվեց պրոֆ. Լեվաշովը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ 56 անիշխանականների գործի առիթով 9 հոգի դատապարտվեցին մահվան պատժի, 32՝ 4 տարի և ցմահ տաժանակիր աշխատանքների։

ԲԷԼԳՐԱԴ։ Սերբական կառավարութիւնը պաշտօնական ծանուցում ստացաւ, թէ Բ. Դուռը թոյլատրել է Թիւրքիայի միջով ստանալ Ֆրանսիայում պատրաստված ռազմամթերքները։

ՆԻԿՕԼԱՅԷՎ.—Պարզվեց, որ Եավլինսօ կայարանում 32,000 բուբլու յափշտակութիւնը դրամատարի սարքած խաղն է եղել։ յանցաւորը կալանաւորված է։

25 սեպտեմբերի

ԴՕՐՏՄՈՒՆԴ։ Մի պայթումից սպանվեցին 9 մարդ։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ։ Սև ծովի նաւատորմը մեկնեց Եալտա։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեց ռուս-աւետարանական քրիստոնեանների և հնադաւանների համառուսական համագումար։ Եկել են 100 պատգամաւոր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամարային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Ագստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցերեկ., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցերեկ., Հաջի-Կարուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բաքու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.։ **Պօսուսար** № 4 **գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Ագստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կարուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բաքու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.։ **Մարդասար** № 6 **գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցերեկ., Ագստաֆա է հասնում՝ 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կարուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բաքու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.։ **Խառն գնացքը**՝ IV կարգի վագոններով բոլոր հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Ագստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կարուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր.։ Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բաքու՝ 5 ժ. 44 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօսուսար** № 74/75՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրոպոլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ալաչխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու)։ Սակայն Ալաչխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ։ **Մարդասար-ապրանքատար** № 78/79 **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրոպոլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէպը այլու չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Մխիայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ։ **Պօսուսար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Մխիայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.։ **Մարդասար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Մխիայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով բոլոր հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Մխիայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյան։

ԲՕՐԾՕՄ՝ **մարդասար** № 7/8 **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Բօրչի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.։ **Մարդասար** № 9/10 **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Բօրչի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒՒԻՑ՝ **մարդասար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.։ **Պօսուսար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր, առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր.՝ երեկ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօսուսար** № 72/73 **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.։ **Մարդասար-ապրանքատար**՝ № 80/81 **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան։ **Պօսուսար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդասար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ։

ԲՕՐԾՕՄԻՑ՝ **Մարդասար** № 9/10 **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդասար** № 7/8 **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բաքու՝ և № 1 Բաքու-Թիֆլիս) առանց վագօնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բաքու-Բօսուսով, միայն վճարելով պ լ ա ց կ ա ր տ ի գինը։

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական, վենեբական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Նոյեմբակ, Բէյբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆոն № 1175.
(կ. ե. հ.) 888. 100—8

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումն, լուացումն, մասաժ, էլեքտրականութիւն, մարմնամարզութիւն։ Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիկական տրիպէրի, սեռական թուլութեան, անկարողութեան և սերմանհոսութեան—ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և բժիշկների հասցէներ։ Կարելի է սառնալ իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9. Ընդունելութիւնը 3—5 ժամը երեկոյեան։
(Ա.Հ.Կ.) 892. 50—6

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շատ ձեռնտու պայմանով
ԾԱԽՎՈՒՄ Է
109 քառ. սաժ. տարածութեամբ
ԳԵՏԻՆ,
որի վրա շինված է մի հատ խանութ։ Հասցէն՝ 6-րդ քաղաքամաս, Պաւլուչինսկայա փող. № 6. հարցնել Ալէքսանդր Միրզայեանին։
(օ.մ.) 940. 2—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՀՄՈՒՏ ՏԻՐԱՑՈՒ
փորձված եկեղեցական արարողութեան և երգեցողութեան մէջ, հմուտ ձայնագրութեան արուեստին և աջողակ ձայնով։ Տարեկան 300 բուբլի ռոճիկ և մօտաւորապէս նոյնքան արդիւնք։
Հասցէն՝ Георгіевскъ, Арм. свящ. Нерсесу Варданянцу.
937. 2—1

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ
ՀԱՅ-ՌՈՒՍ
ԼԻԱԿՍԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Պարունակում է աշխարհաբառի լիակատար բառամթերքը և ոճաբանութիւնը։ Ունի յատուկ անունների բառարան։ Գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ., 6 ր. 75 կ. և 7 ր.։
Նոյն հեղինակի «Ռուս-Հայ բառարան», գինը 8 ր., կազմած 9 ր.։
Դիմել հեղինակին՝ А. Дагбашяну, Евангуловская 8. Въ г. ТИФЛИСЪ.
ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ՁԵՂՉ։
Թիֆլիսի բաժանորդներին խնդրում եմ անձամբ ստանալ ինձնից բառարանս V և VI պրակները (առաւ. ժամը 9—11-ը, երեկ. ժ. 5—7-ը)։
942. 1—1

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Ռուսերենի դասընթացքը
Հայոց ուսում նարանների համար։
ԼՈՑՍ ՏԵՍԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱՑ
դասագիրքը։ Պարունակում է բնաբաններ, թարգմանութիւն, քերականութիւն և բառարան։
Անհրաժեշտ ձեռնարկ մանաւանդ այն ուսուցիչների համար, որոնց սահերը ռուսների հետ չեն շփվում։
Գինը 40 կոպ., գումարով գնողներին զեղչ։ Դիմել՝ А. Дагбашяну. Въ г. Тифлисъ, Евангуловская 8.
943. 1—1

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՈՒՂԻՂ ԵՒ ԴԻՄԱՑԿՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑ!
Ուրիշ էժան ժամացոյցների ետեւից մի ընկնէք։
Լաւ ժամացոյցը միօն իր արժէքն ունի
ՊԱՏԻՒԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒՅԹ
ժամացոյց «Խրոնոմետր» սիստ., 200 ր. արժէքով ոսկէ ժամաց. փոխարէն՝ առաջարկում եմ 5 ր. 25 կ.-ով։ «Խրոնոմետր» սիստ. ժամաց., որը իր ձևով և գեղեցկութեամբ յետ չէ մնում ոսկէ ժամաց., իսկ նրա մեխանիզմի և մետալի լաւ յատկութեան համար «Խրոնոմետր» ժամացոյց երաշխաւորում։ 10 տարով։ Այդ ժամաց. Ճվէյցարական. իսկական նոր ոսկուց է՝ տղամարդու կամ կանանց—3 հատա կափարիչով, լարումը գլխի կողմից 40 ժամը մի անգամ 15 քարի վրա։ Տափակ, համաձայն նկարի. շատ տարածված են և մեծ քանակութեամբ ծախվում են ամբողջ Եւրոպայում։ Գինը 5 ր. 25 կ., 2 հատը՝ 10 ր., 4 հատը՝ 19 ր. 50 կ.։ Գները նշանակված են էժան, որպէսզի ամենքին հնարաւորութիւն տրվի օգտվելու այս ժամացոյցով։ Պատուէրները ուղարկվում են վերադ. վճար. առանց կանխավճարի։ Շրի ուղարկվում է ամեն մի ժամաց. հետ պարիսեան գեղեցիկ երկվեղվ շղթայ իսկակ. նոր ոսկուց բրելօկով և գամէջ քսակով ժամաց. համար։ Ժամաց. ուղարկվում է մինչև բոլէն սառուցած 6 տարվայ երաշխաւորութիւն։ Առանց բիսկի, եթէ տպրանքը չը հաւանէք, փողը յետ ենք վերադարձնում։ Ճանապարհածախս մաքսի հետ միասին 40 կոպ. (Միբիր 75 կ.)։ Հասցէն կարելի է կարել և կպցնել ամուր բաց կամ փակ նամակին

Берлинъ Berlin 91 I. Strumfeld. Kioster str. 42.

Պատուէրների համար կարող էք դիմել ամեն լեզուով. փակ նամակին կպցնել 10 կոպ. մարկա, իսկ բաց նամակին՝ 4 կոպէկանոց։
(B. 60002) 872. 7—1

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՆՈՐ ՄԷԹՈԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ
զատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Շաբաթական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ առ. ժամը 10—12-ը և եր. 4—7-ը։ Միխայլովսկի պլ. № 24/4.
(Հ. հ. շ.) 862. 0—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.